



891.99
U-78





ԿԱՐԵՆ ՄԻՔԱՅԵԼԵԱՆ

ԶՄՐՄԱՆ ԵՐԵԿՈՅ

Բ



19 NOV 2011

ԿԱՐԷՆ ՄԻՔԱՅԵԼԵԱՆ

ԶՄՐԱՆ ԵՐԵԿՈՅ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

I

1. Զմրան երեկոյ	7
2. «Էրֆուրտի ծրագիրը»	12
3. Վարդանանց պատերազմ	23
4. Վերջին լորձանքներ	36
5. Նահանջ	51

II

6. Սաքուլի խումբը	89
7. Կախաղանի վրալ	117

III

8. Առաջին վիշտ	125
9. Հայ-թուրքական կոտորած	136



50807-65

Տպարձն Ք. ԽԱՐԽՈՎԻԴԱՐԵԱՆԻ

Տիպոգրիա X. Բարխարյանց, Մոսկվա, Բ. Սუխարև պետ., հ. 26.

Շապիկի նկարը՝ Մ. Սարեանի:

ԶՄՐԱՆ ԵՐԵԿՈՅ

Հետոց որ վերահաս երեկոյի դոդոջուն
ստւերներն իրենց առաջին դիրքերն են
գրաւում սենեակիս մէջ՝ ես վառում եմ սե-
ղանիս ճրագն ու ամենայն խնամքով իշեց-
նում պատուհանիս վարագոյը: Ապա՝ մօտե-
նում եմ վառարանին, բորբոքում վառող
կրակից կոյտն ու, մի քանի վայս աւելացնե-
լով՝ նստում տեղս:

Ու սկսում է ձմբան երկարատե, անդորր
երեկոն...

Ինչքան լաւ եմ զգում ինձ:

Սենեակս տաք է: Ճրագս առատ լուսով
հեղեղում է սեղանիս վրայ թափթփած գըր-
քերն ու թղթերը և առաստաղը թողնում
խորհրդաւոր մթութեան մէջ: Չորս պատե-
րը վանդակապատում են ինձ զրսի աշխար-
հից, կեանքն իր ժխորով տեղի է տալիս իմ
առաջ, և ես մնում եմ մենակ, ինքս ինձ հետ:

Ոչ ոք ինձ չի խանդարում, ոչ մի ձայն իմ
ականջին չի համուռմ: Լաւում են միայն ժա-
մացոյցիս միալար զարկերն ու վառող փայ-
տերի ախորժ ճարճատումները:

Տարւայ բոլոր եղանակների մէջ կայ ար-
դեօք մի աւելի ցանկալի ու սիրաշուք պահ,
քան ձմբան երեկոն, երբ սկսում ես քո կեան-
քով ապրել և քո հոգեկան ու մտաւոր աշ-
խարհները թափառել...

Ես սաստիկ, սաստիկ սիրում եմ ձմբան
այդ խաղաղ ու երկարատե երեկոները...

Կտրւած դրսի աշխարհից՝ ես մոռանում
եմ նրա գոյութիւնը ու լողում առաջս ծփա-
ցող սեսե տառերի ովկիանի մէջ: Իմ ծա-
րաւ միտքը որոնում է ճշմարտութիւնը,
բնութեան և մարդկային կեանքի բոլոր
գաղտնիքները:

Եւ իմ մտապատկերների շարանից դուրս
է սպրդում իրը, ու իմ առաջ կուտակում
են անվերջ բանաձեւեր, որոնցից ես կեր-
տում եմ թէզիսի, անտիթէզիսի և սինթէ-
զի կառուցւածքները...

Կէս գիշերից անցնում է:

Մէկ էլ՝ յանկարծ պոկւում եմ գըքից ու
հայեացքս ուղղում մի մութ կէտի: Մտքի

սանդուխները տանում են ինձ դէպի վերը,
հեռում: Ինչ որ զգացմունք պատում է ինձ:
Մի տարօրինակ ու անըմբոնելի զգացմունք:
Յանկարծ զգում եմ ինձ մենակ, աչքաթող,
անզօր ու չնչին, ինչպէս անձրեային ճի-
ճուն, և կարօտ մի հովանաւորող թևի, մի
խնամող ձեռքի...

Եւ ես որոնում եմ այն էակին, որին մար-
դիկ միայն հողու աչքերով են տեսնում, ո-
րոնում եմ, որ չոքեմ նրա առաջ և երկըր-
պագեմ: Իմ շրթունքները պատրաստ են
մրմնջալու, արտասանելու այն խօսքերը, ո-
րոնց մարդիկ աղօթք են ասում:

Ես տեղի եմ տալիս...

...Բայց նչ: Երբէք:

Ես բացասում եմ այդ բարձրագոյն ոյժը,
ես չեմ ճանաչում այդ էակին, ես հակա-
ռակ եմ ամեն մի տրանսցենդենտ գոյու-
թեան. ես մատերիալիստ եմ, էմպիրիկ ու
ուշալիստ:

Այդ յոգնածութիւնն է, որ ինձ յաղթա-
հարում է:

Ու մի շարժումով վեր եմ կենում տե-
ղիցս և նայում շուրջս:

Նոյն լուսութիւնն է: Աչքիս են զարնւում

միայն անվերջ գրքերը՝ գիտութեան ու մաքի
պատգամները իրենց գրկի մէջ ամուր պար-
փակած:

Անցնում եմ վառարանի մօտ, աթոռս քա-
շում և սատում:

Դրածս վայտերը այլուել, վերջացել են:
Երկայն կրակակալով առնում եմ կրակի
վրայից մոխրի սպիտակ շղարչն ու խառ-
նում շիկացած ածուխները:

Եւ երկար մնում վառարանի տուած:

Կրակի ջերմ ճառագայթները լիզում են
ձեռքերս և տաք համբոյրներով շոյում երեսս:

Եւ, որտեղից որ է՝ ծնւում են իմ մէջ հե-
ռաւոր ու մեռած յուշեր,—մէկը միւսից ան-
կապ, մէկը միւսից անհեթեթ,—ու յուղում,
տրորում սիրաս:

Յիշում եմ մերթ իմ վաղանցուկ ու աղ-
մըկոտ մանկութիւնը, երբ ես ծառերի կա-
տարներն էի մագլցում՝ կաչաղակների բները
քանդելու, ու մերթ այն՝ ինձ համար երջա-
նիկ օրը, երբ պատանի հասակում իմ ա-
ռաջին գիտական յօդուածը տալեց, ու ես
խրախուսական նամակներ ստացայ:

Յիշում եմ ինչ որ արտասուքի խոշոր,
պապղուն կաթիլներ և այն դէմքը, որի վրա-

յից նրանք մարգարտաշար դէպի ցած են
գլորւում: Փողոցի մի տղայ էր նա, որին,
—չգիտեմ ինչու, —ապտակել էի, և նա դառն
ու աղեկտուր հեկեկում էր:

Այդ հեկեկանքը ծնում է իմ մէջ ինչ որ
տխուր մեղեղիներ, որոնք եկեղեցական ժա-
մերգութեան են վերածում, և ես յիշում
եմ քահանաների մուայլ, դժգոհ դէմքերը ու
մտաբերում մտերիմ ընկերոջս սգալի թա-
ղումը...

Եւ, կարծես՝ ծխնելոյզում խաղացող քա-
մու գալարումների մէջ լսում եմ ես մերթ
կաչաղակի աւետաբեր քչքչոցը, մերթ փոք-
րիկ տղայի խայթող հեկեկանքը, մերթ մուայլ
քահանաների տխուր սգերգը...

Սիրտս ճմլւում է, ես ուզում եմ լալ:
Ես մենակ եմ ու սարսափում եմ իմ մե-
նակութիւնից:

Ա՛խ, դէթ մի տաք ձեռք, որ սեղմէի, մի
բարախող կուրծք, որ գրկէի, մի հնչուն
խօսք, որ ականջ դնէի:

„ԵՐՖՈՒԻՐՏԻ ԾՐԱԳԻՐ”

Մինչև օրս էլ քեզ չեմ մոռացել:
Յիշում ես ինձ երբ և իցէ:

Այսօր առանձնապէս մտաբերեցի քեզ, իմ
անցեալը և ամենը, ինչ կատարւեց այն ժա-
մանակ մեր երկուսի մէջ:

Մտաբերեցի՝ ինչպէս այսօր:

Այն, դու մի կարճահասակ ու նրբակազմ
աղջիկ էիր: Նախ քան մեր ծանօթանալը՝
դու իմ մէջ ոչ մի հետաքրքրութիւն ու հա-
մակրանք չէիր յարուցանում: Քո համեստ,
անշուք հագուստից ու հնամաշ, կարկատ-
ւած կօշիկներից երկում էր, որ դու ունեոր
ծնողների զաւակ չէիր: Մի բան, որ իմ ու-
շագրութիւնը զրաւեց ու յետոյ իմ հիաց-
մունքի առարկան դարձաւ,—այդ՝ քո կամա-
րաձև ու գեղանկար ունքերն էին...

Գիտէի, որ ինչ որ կուրսեր ես յաճախում:
Ուղիղը խոստովանած՝ սովորող կանանց մա-

սին ես լաւ կարծիք չունէի: Դա բաւական
չէր. այդպիսիներին ուղղակի արհամարհում
էի: Արհամարհում էի և քեզ, մանաւանդ,
որ տղամարդ յաճախորդները քեզ մօտ պա-
կաս չէին լինում: Զգիտէի, թէ ինչ գործ
ունին նրանք քեզ մօտ...

Եւ ամեն անգամ, երբ սանդուխների վրայ
կամ փողոցում հանդիպում էի քեզ, շտա-
պում էի որսալ քո հայեացքն ու կարդալ
նրա մէջ քո պատկերը, ճանաչել քեզ: Իսկ
դու իմ թափանցող հայեացքի տակ դանդա-
ղեցնում էիր քայլերդ ու, հիպնոսւած, յա-
ռում հայեացքդ իմ աչքերին, մի վայրկեան
քարանում: Ու յետոյ, սթափւելով, իջեց-
նում էիր գլուխդ և, կարծես վախեցած, շտապ
ու արագ փախչում ինձանից, ինչպէս մար-
գագետնից առւակի մօտ իջած նապաստակ:

Քո երկու սկզբակ ու խելօք աչքերի մէջ
բացի անմեղութիւնից ես ոչինչ չէի կար-
դում...

Եւ մնում էիր ինձ համար դու՝ որպէս հա-
նելուկ:

Մենք ծանօթացանք:
Քո առաջարկը—այցելելու քեզ՝ ընդունեցի
հաճոյքով:

Այդ օրը յատկապէս վարսաւիրի մօտ անցայ, խնամքով սանտրւեցի, ընտրութեամբ հագնւեցի. օպլայած դաստակապատերիս ուկի կոճակներ անցկացրի, փողպատս զարդարեցի ադամանդի քորոցով ու մի փոքր էլ անուշանոտ իւղ ցանեցի թաւէ թաշկինակիս։
 Ես ցանկացայ քեզ շլացնել, քեզ վրայ տպաւորութիւն գործել։
 Ես կանանց այդպէս էի շլացնում։
 Իսկ դու այդ ամենը անուշադիր թողիր։
 Իմ արտաքինով դու չգրաւեցիր։
 Տարօրինակ թւացիր դու ինձ։
 — Պարապնւմ էք ընթերցանութեամբ, —
 հարցըրիր։
 — Գերադասում եմ թատրոն յաճախել, —
 պատասխանեցի։
 — Իսկ պարբերական թերթեր։
 — Կարդում եմ։
 — Ունեցել էք երբ և իցէ այս թերթերը ձեր ձեռքի տակ։
 Թերթերի մի կապոց դրիր առաջս։
 Աչքի անցկացըրի, Վերնագիրներն անծանօթ էին։
 — Ո՞չ, — շնչացի ես։ Զգիտեմ ինչնւ՝ ամաշեցի ու դգացի, որ ականջներս կարմրել են։

Այդ ժամանակ քո ունքերը, որպէս ծիածանի երկու կամարներ, վեր քաշւեցին, քո աչքերը, որպէս երկու լոյս աստղեր, վիայլեցին ու ժպտացին, և դու հեղահամբոյր ասացիր.

— Երկի առիթ չէք ունեցել. վերցրէք, եթէ չէք վախենում խուզարկութիւնից։ Այդ թերթերն անլեզալ' են։

Տարակուսած նայեցի քեզ։

— Ես վախկոտ չեմ, — պատասխանեցի խայթւած խնճասիրութեամբ։

Այսուհետեւ դու ինձ թէյով հիւրասիրեցիր։

Հետևեալ օրն ուղարկեցի քեզ ծաղկամանի մէջ դեռափթիթ վարդենու մի չքնաղթուփ և երկու տուփ քաղցրաւենիք։ Ծաղկամանի մէջ դրի այցեառմաս։

Իմ այդ ուշադրութիւնը դու անխնայ ծաղրեցիր։

— Եթէ աւելորդ փող ունիք՝ ես կասեմ ձեզ գործադրելու եղանակը։

Ես շփոթւեցի ու ինձ կոտրւած զգացի։

Նայեցի քո ունքերին կրկն կամարաձեվեր էին քաշւել, քո սեւրակ աչքերը կրկն ներողամիտ ժպտառմ էին։

Դու զգացիր իմ անյարմար դրութիւնը,
դու կարեկցեցիր ինձ:

— Կարդացէլ էք կարլ կառցկու «Եր-
ֆուրտի ծրագիրը», — անսպասելի հարցըիր
դու, երևի՝ խօսակցութիւնը փոխելու դի-
տումով:

Գիտէի, որ Երֆուրտ անունով Գերմա-
նիայում մի քաղաք կայ, բայց չգիտէի, թէ
նա ծրագիր է ունեցել: Եւ, վերջապէս՝ ինչ
հետաքրքիր է կարդալ մի ինչ որ օտար քա-
ղաքի ծրագիրը:

— Երևի՝ չգիտէք անգամ, ով է կարլ կա-
ռցկին, վրայ բերիր դու՝ գուշակելով իմ
դէմքի արտայայտութիւնից տալիք պատաս-
խանս:

— Առաջին անգամն եմ լսում, — պատաս-
խանեցի դժկամօրէն:

Դու արհամարհանքով ու լիարերան ծի-
ծաղեցիր, դու ինձ հեղնեցիր:

— Ինչպէս կարելի է կարլ կառցկուն
չճանաչել. յետին կառապանը գիտէ: Երևի՝
դուք միշտ ձեր ծանօթներին ծաղիկներ ու
կանգէտներ ուղարկելով էք զբաղւած...

Այս անգամ ինքնասիրութեանս դիպաւ:
Վրդովմունքիս չափ չկար: Նայեցի քեզ, — մի

քմծիծղաղ խաղում էր շրթունքներիդ, և քո
դէմքը օտար ու վանող էր: Մի ըոպէ քեզ
ատեցի:

Յանկարծ մի տագնապ անցաւ քո դէմ-
քով: Դու զղացիր քո խստութեան համար.
հասկացար ու կարեկցեցիր ինձ:

— Ես ձեզ չեմ մեղադրում, ձեր շըջանն
է մնղաւոր. Դուք առիթ չեք ունեցել: Ես
կտամ ձեզ այս գիրքը, տարէք՝ ծանօթացէք:
Ու սիրալիր ժպտացիր:

Ողջ գիշերը ես չքնեցի: Ես կարդում ու
թերթում էի գիրքը: Այդ գիշեր միայն հաս-
կացայ, թէ ինչու նա «Երֆուրտի ծրագիր»
է կոչւում:

Այնուհետև ամեն օր յաճախում էի քեզ:
Դու անընդհատ ինձ գրքեր էիր տալիս. և
մենք խօսում, վիճում, դատողութիւններ
էինք անում կարդացածի մասին: Ես այդ
բոլոր գրքերը կարդալուց յետոյ ճշտապա-
հութեամբ վերադարձնում էի քեզ, բայց
«Երֆուրտի ծրագրից»: Այդ գիրքը պահեցի
մօտ:

— Ցիշում ես՝ քանի գիշերներ ենք անքուն
լուսացրել...

Գարնանային հիասքանչ գիշերներ...

2



Ինչու այնքան կարճատեւ էին գարնանա-
յին այդ հիասքանչ գիշերները...

* * *

Մի օր սրտատրոփ վազեցի քեզ մօտ ու,
քո փոքրիկ, նշխարանման ձեռքը երկու ա-
փերիս մէջ քնքոյշ սեղմելով՝ անկեղծօրէն ա-
սացի.

— Ես գիտեմ՝ դու իմ զգեստը չէիր հա-
ւանում: Այսուհետեւ ես ուզում եմ հագնւել
քո ճաշակով՝ այնպէս, ինչպէս քո միւս ծա-
նօթներն են հագնւում: Տես, հաւանում
ես...

Հագիս պարզ, բանւորական կապոյտ վեր-
նաշապիկ էր, գոտեպատած երկնագոյն ծո-
պաւոր շնուրով, առանց օսլայած դաստա-
կապատերի ու օձիքի:

Դու զղայնօրէն խլեցիր ձեռքդ ափերիս
միջից՝ քո փոքրիկ, նշխարանման ձեռքը, մի
քայլ հեռացար ինձանից ու, կարծես՝ մի
վատ բան նախազգալով, տագնապով լի նա-
յեցիր ինձ:

— Ինչի՞ համար են այդ ցոյցերը, — յան-
դիմանեցիր խստօրէն:

Ես մի ըսպէ շփոթւեցի ու յետոյ, սիրտ

առնելով, արդարանալ սկսեցի՝ ինչպէս յան-
ցանքի մէջ բռնւած աշակերտ:

— Ես ցոյցի համար չեմ հագնւել և ոչ
էլ մօդայի... Ես զգում եմ, որ այժմ ուրիշ
մարդ եմ... Ես կարող եմ նոյն իսկ գործա-
րաններ գնալ, պըոպագանդ մղել բանւորնե-
րի մէջ: Ես... Ես այժմ սոցիալիստ եմ... Ես
պատրաստ եմ ամեն ինչ անել, միայն թէ
դու ցանկանաս, դու հրամայես...

Դու լուռ էիր:

Աչքերդ գետին խոնարհած ու սփինքսի
պէս անշարժ լսում էիր միայն:

Իսկ ես ցանկանում էի, որ դու խօսէիր,
որ քո ունքերը սովորական նազանքով կո-
րանային ճակատիդ վրայ, որ դու ժպտայիր՝
այնքան սիրանւէր, այնքան հեղահամբոյր:

Ես ուզում էի ծունկ չոքել քո առաջ:

Իսկ դու անտարբեր էիր, լուռ ու անշարժ:

Ես կեանքումս ոչ ոքից այնքան չէի ակ-
նածել, որչափ քեզանից: Մինչ այդ տեսածս
կանանցից ոչ մէկին նման չէիր դու: Ես
քեզ յարգում էի վճիռ, անաղարտ սիրով, ինչ-
պէս ոչ ոքի: Դու արդէն իմ հոգու թագու-
հին էիր...

Զգիտեմ՝ մէկ էլ կեանքումս այդպէս սի-
րելու եմ, թէ ոչ...

Այլս համբերել անկարող էի: Ես խոնարհ-
ւեցի քո առաջ և թոթովեցի իմ սէրը:

Դու գունատւեցիր, ինչպէս փղոսկր: Դու
չէիր սպասում:

— Երջանիկ լինել մենք չենք կարող, — ա-
սացիր դու՝ սառն ու խորհրդաւոր:

— Իսկ մինչև օրս այնքան լաւ էիր ինձ
հետ, այնքան մտերիմ, սիրահամբնյը...

— Այս, ես զրաւել էի քեզանով, բայց ես
չէի ուզի... ես... ես սիրել քեզ չեմ կարող:

Արտասուքները թշրջեցին աչքերս:
Իսկ դու կտրուկ ու հաստատակամ վեր-
ջակետ դրիր:

— Մենք տարբեր շըջանի մարդիկ ենք,
մեր մէջ վիճը շատ մեծ է:

Այդ գիշեր ես անկողնումս դառն ու սրտա-
կտուր հեկեկացի...:

Այսուհետեւ մենք այլս չհանդիպեցինք
միմնանց...

* * *

Այդ օրւանից յետոյ շատ բան փոխւեց:
Փոխւեցի և ես:

Այժմ մի գործնական մարդ եմ ծանրա-
բեռնւած բազմաթիւ հոգսերով:

Անցեալից իմ մէջ ոչինչ չի մնացել:
Իսկ դու, ասում են, ամուսնացել ես այն
ինտելիգենտ բանւորի հետ, որին ես յա-
ճախ հանդիպում էի քեզ մօտ: Ես այն ժա-
մանակ էլ կասկածում էի ձեր մտերմու-
թեան վրայ... Բայց, ասում են, որ դու
քեզ գժրախտ ես զգում: Զգիտեմ, գուցէ:
Այսքանը միայն համոզւած եմ, որ դու քո-
ծանը լուծը մինչև վերջը կտանես անտըր-
տունջ, լոելեայն, հերոսաբար:

Իսկ ես... ես էլ իմ լուծը անտըրտունջ ու
լոելեայն եմ տանում: Ոչ ոք ոչինչ չգիտէ:
Ընդհակառակը՝ բոլորն էլ ինձ երջանիկ են
համարում, որովհետեւ նա այնքան հարստու-
թիւն—փող, տուն-տեղ բերեց իր հետ...

Այսօր նրան ճանապարհեցի ամարանոց:
Ես միայն այդ ժամանակ եմ ինձ երջա-
նիկ զգում...

Օգտւելով նրա բացակայութիւնից՝ ա-
ռանձնացայ սենեակումս ու տարւեցի ան-
ցեալի յուշերով: Մէկ էլ յանկարծ, չգիտեմ
ինչնւ, բացի պահարանիս մի դարանը ու
սկսեցի ինչ որ բան փնտրել: Որոնածու շուտ

գտայ: Այդ քո զիրքն էր՝ «Երփուրտի ծրա-
գիր»...

Կրօնական ակնածութեամբ ու խնամքով
թերթեցի զիրքը սկզբից մինչև վերջը, աչքի
անցկացրի այն տողերը, որոնք դու կարեոր
ես համարել և մատիտով ընդգծել: Մի քա-
նի տեղ, լուսանցքներում, մնում են քո մա-
կագրած նկատողութիւնները: Ես այդ բո-
լորն էլ աչքի անցկացրի ու զիրքը նորից,
նախկին խնամքով, պահեցի դարանիս մէջ:
Այդտեղ ես իմ ամենակարեոր թղթերն եմ
պահում:

«Երփուրտի ծրագիրը» ես չեմ կորցնի:
Եւ քեզ իմ յիշողութեան մէջ...

Մոսկվա, 1909.

ՎԱՐԴԱՆԱՑ ՊԱՏԵՐԱԶՄԸ

Վաղն արդէն հինգշաբթի է:
Իսկ ես դեռ ոչինչ չեմ արել:
Ահա երեք շաբաթ է, ինչ ամեն օր, հէնց
որ մթնում է, փակւում եմ սենեակումս,
ձեռքս առնում թուղթն ու մատիտը՝ մի
փոքրիկ ծրագիր կազմելու:

Սակայն՝ բաւական է մի ըսպէ, որ ինձ
պատկերացնեմ ուսումնարանի ընդարձակ
դահլիճը և փոքրիկ ամբիոնը, որի վրայից
ճառ եմ արտասանում. բաւական է, որ ես
զգամ հասարակութեան զսպւած շնչառու-
թիւնը և այն անհամար հայեացքները, որոնք
դէպ ինձ են մեխւած. բաւական է, որ աչ-
քիս ընկնեն առաջին կարգում բազմած հո-
գաբարձուների լայն ու բութ դէմքերը, — բա-
ւական է այդ փոքրիկ մտապատկերը, որ
իմ մտքերն իսկոյն ցրւեն, և ես յիշեմ որևէ
դէպք իմ անցեալից, — յաճախ չնչին և ան-

նշան,—ու, տարւած այլ յուշով, կորցնեմ
ողջ գիշերը:

Այս երեկոյ ինձ հանգիստ չի տալիս, ինձ
հալածում է... նրա հարսանիքը...

... Ես ուշ գնացի: Ես նոյն խսկ չեի ու-
զում գնալ ու պատրտեցի «Հարսանեաց Հրա-
ւելը»... «Բայց ոչ, —ասացի, —թող տեսնեմ»
իմ ներկայութեամբ ինչպէս ես դու ուրա-
խանում»...

Եւ երբ մտախոն ու տխուր պարտիզի ներսն
անցայ, ուր հարսանիքն էր կատարում, մի
ըռպէ մտքովս անցաւ թագնւել թփի յետևն
ու հեռւից դիտել նրան՝ իր փեսացուի հետ:
Յանկարծ՝ կանացի մի ձայն ցնցեց ինձ, յետ
նայեցի ու ճանաչեցի նրան՝ նորահարսի
սպիտակ զգեստով:

— Ինչու այսպէս ուշ, պարոն Արամ, — ա-
սաց նա յուզւող ձայնով, — մի ժամանակ ինձ
թւաց, որ այլևս չէք գայ. ինչու չէք մօտե-
նում հանգիստականներին: Գնանք, ի միջի
այլոց, կծանօթացնեմ և իմ փեսայի հետ:
Գիտեմ, դուք նրան չէք հաւանի. ձեր և
նրա հայեացքների մէջ տալբերութիւն շատ
կայ.. բայց, գիտէք ինչ, միայն այս երկու
օրս նրան մօտիկուց ճանաչեցի. չպէտք է

այնքան էլ խստապահանջ լինել. նա լաւ
մարդ է, բարի, բնաւորութիւնը մեղմ, յա-
մենայն դէպս՝ նրա... նա լաւ ընկեր կարող
է լինել...

— Գնանք, ծանօթացը էք, — վրայ բերի ես
վճռականօրէն:

Այդ նրան տարօրինակ թւաց. մի ըռպէ
լուց, քարացաւ ու տագնապով լի նայեց
աչքերիս:

«Հըմ... զարմաննեմ ես... — մտածեցի ես,
— չէ՞ր սպասում. դու կարծում էիր՝ ես
կհրաժարւեմ, ես կսկսեմ հայեցէլ նրան
իբրև իմ բաղդը յափշտակողի»...

— Ինչու չէք շարժւում. գնանք, ծանօ-
թացը էք ինձ ձեր փեսայի հետ, — կրկնեցի ես
սառն ու շինծու անտարբերութեամբ:

Նա հպատակւեց ինձ:

Մենք մօտեցանք փեսային:

Իսկոյն մեզ վրայ կենարոնացան հիւրերի
հետաքրքիր ու հարցական հայեացքները:
Ոմանք երկիմաստ ժպտացին, ոմանք փսփսա-
ցին իրար ականջի, ոմանք ցինիկօրէն քըրք-
ջացին...

Ատելութեամբ ու զգւանքով լիքը՝ ես խոյս
տւի այդ հասարակութիւնից, բարձրացայ

պատշգամբը ու առանձնացայ այն փոքրիկ
սենեակում, ուր յաճախ, ձմբան երեկո-
ներին, մենք այնքան մտերիմ ժամեր ենք
անցկացրել, խօսել, կարդացել, ոգևորւել...

Գաւառական փոստը նոր էր եկել. ես
սկսեցի թերթել ստացւած լրագրները՝ ա-
ռանց, սակայն, կարդացածս հասկանալու:

Լսեցի, թէ ինչպէս դուրսը լոեց լարաւոր
երաժշտութիւնը, և ասիսկան բոի փողա-
հարները զլեցին իրենց ձայնառատ նւազը:

Հարկան սենեակներում ու նախասենեա-
կում հնչեցին շտապ ոտաձայներ, աղմուկը
խտացաւ, մարդիկ իրար անցան:

— Դէհ, շնւտ արէք, հարսին պսակելու
են տանում, ով եկեղեցի է զնալու, թող
պատրաստի, — լսում էին այս ու այն կող-
մից կարդադրող ձայներ:

«Պսակելու են տանում... թող, թող տա-
նեն... ես հօ ոչինչ... ես նոյն իսկ լրագիր
եմ կարդում, թէ ինչպէս կողը զիւղում գո-
ղերը ուզեցել են մի կով փախցնել և դար-
պասի մօտ... դարպասի մօտ... հա, փողա-
հարները երթի եղանակն արդէն դարպասի
մօտ են փչում»...

Լրագիրը ձեռքիցս սայթաքեց. սիրտս սկսեց

արագ-արագ բաբախել. գլուխս առայ աղե-
րիս մէջ:

Յանկարծ լսում եմ կանացի թաւշեայ
շըջազգեստի խշխցոց. բարձրացնում եմ գլու-
խըս ու տեսնում նրան՝ ոտքից մինչև գլուխ
սպիտակ հագնւած, պսակի ոսկեցօղ քողը
երեսին:

— Մնաք բարե... Արամ, մնաս բարե...
— շշնջաց նա կցկտուր, — վաղը, վաղը մենք
ճանապարհում ենք: Գուցէ վերջին անգամն
է... ներիբ... ես էլ շատերից մէկը... հայ
կինը... չկարողացայ, ուրիշների կամքը կա-
տարեցի... և ուզում էի ասել, որ դու... որ
ես քեզ յաւիտեան չպիտի մոռանամ... մնաս
բարե... ներիբ...

Ես վեր կացայ տեղիցս, լոելեայն ու կո-
պիտ երեսս շուռ տւի:

Զգացի, թէ ինչպէս նա որսաց իմ ձեռ-
քըն ու սեղմեց իր տաք շըթունքներին: Ես
խլեցի ձեռքս ու մնացի նոյն դրութեան մէջ:
Եւ երբ երեսս դարձրի՝ նա այլևս չկար:

Այն ժամանակ ձեռքս մօտեցրի իմ շըր-
թունքներին ու սկսեցի խելագարի պէս
համբոյներ զրոշմել այնտեղ, ուր նրա դառն
ու աղի արցունքներն էին կաթել...

— Նորահարսն ու վեսան ապրած կենան,
ուռա... որոտաց մէկը պատշզամբից:

— Ուռա... ա... արձագանք տւին հարիւ-
րաւոր ձայներ ներքելից:

Փողահարները նւագում էին այս անդամ
դարպասից դուրս, վողոցում, ճիշտ այն սե-
նեակի տակը, ուր ես էի գտնուում:

Ես վագեցի, հանգցը ճրագը ու, կանգնե-
լով պատուհանի առաջ, ճանապարհ դըի պսա-
կելի դոյզին... Զոյզը անցաւ, ես ընկայ ա-
թոռի վրայ: Դրսից հարսանիքաւորների պըլ-
պըլացող մոմերի աղօտ շողերը երերացին
սենեակի մութ առաստաղին ու չքացան.
հարսանիքը գնաց, անցաւ...

Եւ այս ըուպէիս էլ, այս ուշ գիշերին, երբ
փետրւարի ցուրտ քամին ոռնում է պատու-
հանիս ճեղքերի մէջ, յիշեցնում է ինձ փո-
ղահարների այն զիլ ու միալար նւագը, որ
հետզհետէ հեռացաւ ու նւաղեց...

Շնորհակալութիւն քեզ, քամի, հազար
շնորհակալութիւն, որ խզեցիր իմ յուշերի
շարանը: Զէ՞ որ այսօր վերջին գիշերն է, և
ես վաղը հանդիսին ճառ պիտի արտասա-
նեմ:

Բայց, սպասիր, նոր թուղթ հանեմ, մա-

քուր և անբիծ. կաց, մատիսս սրեմ, այ,
այսպէս: Այժմ թող թղթի ճակատին ճառիս
վերնագիրը գըեմ.

Վարդանանց պատեր ազմը:

Ու տակը հաստ գիծ քաշեմ: Ահա, այս-
պէս: Այժմ մի փոքրիկ կոնսպեկտ, մի թե-
թև ծրագիր: Բայց նախ և առաջ կենտրոնա-
ցնեմ իմ մտքերը: Ի՞նչ խօսեմ առհասարակ,
ինչպէս տանեմ իմ ճառը... ինչպէս սկսեմ...
Մի փոքրիկ համբերութիւն, սպասիր... Վա-
ղը կամ, աւելի ճիշտն ասած, այսօր (չէ՞ որ
կէս-գիշերից անց է), ժամը 12-ին, երբ
կվերջանայ պատարագը, խուռը բազմու-
թիւնը կլցնի ուսումնարանի դահլիճը: 12-ից
քսան ըուպէ անց (անպատճառ քսան ըուպէ
անց) կրարձրանայ վարագոյրը, և, բեմի վրայ
դասաւորւած երգեցիկ խումբը ճեղքելով՝
ամբիոն կենեմ:

— Դպրոցի տեսուչը... Արամ Վհատեա-
նը, — կշնջան դահլիճում:

Եւ ես կսկսեմ ճառս:

Ես այս քաղաքում անյայտ մարդ չեմ:
Արամ Վհատեանին ամեն ոք գիտէ: Փոքրիկ
կարծիքի չեն և իմ հոետորական ձիրքի
մասին:

Այն, ես գիտեմ լարել ունկնդիրների ուշադրութիւնը, ես կարող եմ ազդել նրանց մտքի ու զգացմունքի վրայ: Այդ է պատճառը, որ նրանք ամեն տարի Վարդանանց տօնին գալիս և լցնում են գահին:

Իսկ Վարդանանց պատերազմը ինձ համար եղել է այն սքանչելի կանւան, որի վրայ ես հիւսել եմ իմ գաղափարները, իմ տեսչերը, իմ ձգտումները...

Վարդանանց պատերազմը... Դա եղել է ոգևորութեան այն երանելի առւակը, որով ոռոգել եմ իմ հոգեկան անդաստանը, միենոյն է՝ ինչ սերմերով էլ ցանւած լինի:

Մերթ ազգային և կուլ'տուրական վերածնութիւն, մերթ Տաճկա-Հայաստանի ազատագրութիւն, մերթ սոցիալական կոիւ և ճնշւածների ու հալածւածների դատ...

Իսկ այս տարի:

Բայց, կաց, ես արդէն սկսել եմ ճառս... Հըմ... ճնշւածների և հալածւածների դատ... սոցիալական կոիւ... Միթէ այս խօսքերը երբ և իցէ արտասանել եմ... Ազատագրական շարժման այն լայնածաւալ փոթորիկը, որ... Զէ, ես չեմ կարող շարունակել: Այդ ամենը կեղծ է, շինծու և զգւելի, այն, զգւելի:

Ես արդէն սկսում եմ կմկմալ: Ա՛խ, ինչու ցամաքեց իմ ոգևորութեան աղբիւրը, ուր կորաւ իմ հաւատը: Կեանքիս կէսը կոտայի...

Յանկարծ նկատում եմ (մի բան, որ ուրիշ տարիներ երբէք տեղի չի ունեցել), թէ ինչպէս երրորդ պատրաստականցի Տիգրանեանը գրչածայրով իր ընկերների կռներն է ծակծկում, իսկ Գէորգեանն անվերջ ծիծաղում է: Դաստիարակ Որոտեանը, փոխանակ կարգապահութեան վրայ հակելու, կուացած անընդհատ փափսում է օրիորդ Նազիկեանի ականջին... Ա՛խ, ատելով ատում եմ այդ ծակերներին, որոնք, աշակերտական սեղանը դեռ չթողած, ուսուցչական ամբիոնն են բարձրանում... Ի՞նչ ուսուցիչներ կարող են լինել դրանք, ասացէք՝ խնդրեմ...

Վրդովլած՝ հայեացքս նրանցից, դարձնում եմ դէպի դահլիճը... Եւ ի՞նչ եմ տեսնում... Առաջին կարգում սրբազնը ննջում է, իսկ հոգաբարձուները ծոյլ յօրանջում են: Ինձ լսում են մի քանի ձանձրացած դէմքեր, թոյլ քմծիծաղները բերաններին: Տէր Աստած, ինչքան քիչ հասարակութիւն է հաւաքւել այս տարի... Ա՛, ես գիտեմ պատ-

ճառը: Նրանք զգացել են իմ մէջ կատարած փոփոխում... Ոչ, դուք սխալում էք, ես դեռ ճառել գիտեմ... Ես դեռ տեղի չեմ տւել... Դուք հասկանում էք...

Աչքս մի դէմքից միւսն եմ դարձնում և ես դահլիճի մէջ սկսում եմ որոնել մէկին, որի ներկայութիւնը, թւում է, ինձ նոր թափ, նոր եռանդ կտայ... Ահա, ահա նրա սովորական տեղը. չորրորդ կարգի առաջին աթոռը... Դատարկ է... Նա դահլիճնումը չէ...

Մի անսպառ կարօտ, մի անտակ ափսոսանք պատում է իմ սիրու, և արտասուքի կաթիները խեղդում են բուկս...

Ես այլևս անկարող եմ շարունակել:

Յանկարծ՝ դահլիճնում լաւում են սուլոցներ...

Ուսուցիչներն ու աշակերտները խառնում են միմեանց. սրբազնը, քնից արթնացած՝ ոտքի է կանգնում. ոմանք աթոռների վրայ են բարձրանում:

Տիրում է աղմուկ, իրարանցում:

Ես ամօթահար իջնում եմ ամբիոնից:

Իմ ճառը կիսատ է մնում...

Մէկը դեռ շարունակում է անընդհատ սուլել...

Բայց դա կրկին քամին է, որ բաղխում է դրսից պատուհանիս փեղկերն ու վայում նրա ճեղքերի մէջ: Ուրեմն՝ այս ամենը երևակայութիւն էր, և ես զառանցում էի: Որքան ուրախ եմ... Կնշանակի՞՝ դեռ ևս մի ողջ գիշեր կայ առաջիս, և ես դեռ հնարաւորութիւն ունիմ վաղւայ ճառիս համար նախապարաստելու: Ես իսկոյն, իսկոյն, ես շատ շուտ կկազմեմ ծրագիրը... ահս, եթէ կրկին այդ հարսանիքը չկաշկանդի իմ մտքերը:

Տարօրինակ է, եօթ ամիս է անցել այդ օրից, և ոչ մի անգամ նա այսքան պարզ և այսքան կենդանի չի պատկերացել ուղեղիս մէջ, ինչպէս այսօր:

Կարծես՝ երէկ էր:

Երանի թէ գնացած չլինէի: Եւ ես միշտ տատանում էի՝ գնամ, թէ չգնամ: Իսկ երբ մօտեցայ նրանց տանը՝ հրավառած դարպասի մօտ ինձ ընդունեց նրա հայրը, մեր դպրոցի հոգաբարձուն: Մեր քաղաքում նա անւանի մարդ է: Նա ինձ ներս հրաւիրեց, սեղմեց իմ ձեռքն ու առաջնորդեց դէպի պարտէզը, ուր տեղի ունէր հարսանիքը: Ապա նա մի գննող հայեացք ձգեց վրաս ու

մեղմ ժպասաց, ներողամիտ, բայց յաղթական ժպտով:

Ես հասկացայ այդ ժպտի իմաստը: Նա գիտէր ամեն ինչ և գոհ էր, որ ելքը յաջող էր...
Ես անցայ պարտէզ:

Անհամար գոյնզգոյն լապտերներ, ինչպէս պսպղուն ժանեալներ, մի ծառից միւսն էին ձգւում: Նրանց դողդոջուն լոյսի վրայ կամար էր տւել կէս-զիշերւայ խաւարը՝ իր կապոյտ թերի տակ ծածկելով բարձր ծառերի մեղմօրօր կատարները:

Հնչում էր լարաւոր երաժշտութիւնը:

Եւ մեղմախօս թառի թրթիռներն ու նրան ձայնակցող ջութակի վշտոտ հեծկլտանքները ծնւում էին այդ լուսեղէն կամարի տակ, ձուլւում ու դափի թոյլ հարւածների հետ դէպի վեր սլանում և մեռնում այնտեղ սաղարթների մթին ծալքերի մէջ:

Հանդիսաւոր ու հիասքանչ դէմքերից մի օղակ կազմած՝ մի չքնաղ կին, թեթև ու ճկուն, սահում էր կանաչ խոտի վրայ և սպառում հեշտանքով ու նազանքով լիքը «ուզունդարան»...

Հնչում է ծափը, թնդում են մարդկանց խինդ աղաղակները:

Ինձ թւում է, որ ես տեսնում եմ մի կախարդիչ հէքիաթ, որ ես լսել եմ մանկութիւնից, չգիտեմ՝ որտեղ և ումից:

Ինձ թւում է, որ ես տեսնում եմ մի ուկեհիւս երազ, երբ ես դեռ փոքր էի ու քնում էի մօրս գրկին փարած:

Հէքիաթ էր, երազ էր այդ:

Այս, հէքիաթ էր և իմ ողջ անցեալը, երազ է և իմ կեանքը:

Անցաւ, գնաց ամեն ինչ...

— Իսկ դուք, յարգելի հանդիսականներ, սպասեցէք՝ որքան ուզում էք:

Ես ձեզ ասելու այլևս ոչինչ չունիմ...

Մոսկա, 1910

ՎԵՐՁԻՆ ՑՈՐՉԱՆՔՆԵՐ

I

Ամեն երեկոյ, երբ շրջապատող լեռների
բարձր գագաթները կորցնում են իրենց կա-
պոյտ ուրւագծերն ու լուծում իջնող խա-
ւարի մէջ, և լայնաստարած, հսկայ ծովը շըն-
չում է երեկոյեան զով հովերով՝ ես դուրս
եմ գալիս սենեակիցս ու այգին շտապում:

Ես գնում եմ կրկին և կրկին անգամ նրան
հանդիպելու: Այդտեղ և միայն այդ ժամին
ես հնարաւորութիւն ունիմ նրան տեսնելու,
գոնէ հեռւից-հեռու նրանով յագենալու:

Ես անցնում եմ իմ սովորական տեղը,
նստում այգու մէջ՝ փոքրիկ հրապարակը
շրջապատող նստարաններից մէկի վրայ ու
ժամերով սպասում:

Բարձր սոճիների, փարթամ կաղնիների
ու սև նոճիների արանքներում, իբրև մի-մի

արեգակներ, վառւում են էլեկտրական լու-
սագնդերն ու սաղարթների միջից սուեր-
ների օրօրւող ցանցերով ծածկում նեղ ծա-
ռուղիները:

Այդու կենտրոնում, մի շրջանաձև ծած-
կոցի տակ՝ սկսում է հնչել լարաւոր երա-
ժշգառութեան մշտասովոր ու ծոյլ նւագը:

Աջ ու ձախ մուտքերից դէպի ներս են
հոսում մարդկանց շերտ-շերտ շարքերը, ո-
րոնք գալիս, կուտակւում են հրապարակի
վրայ ու նւագածութեան շուրջը խոնառում:
Շուտով կազմւում է բազմաձև ու բազմե-
րանգ գլխարկների մի հեղեղուկ ծով, որ
շարժւելով, երերալով, վերջի ի վերջոյ՝ եր-
կու օղակաձև ու հակաշարժ պտոյտների է
վերածում:

Եւ գալիս, անցնում է առաջովս այդ
պտտւող մարդագունդը, որին,—ինչպէս մեղ-
րածանձերի բզզոցը փետակի առաջ,—ա-
ռաջնորդում է ծիծաղների, հոհոցների ու
հարիւրաւոր ձայների մի ձուլածոյ ժխոր:
Այդ ժխորը, հիւսւելով հնչող երաժշտութեան
հետ, խտանում է օդի մէջ ու կախւում թևա-
տարած ծառերից. իսկ ներքե, գետնի վրայ,
անհամար ոտների, ձեռափայտերի և հո-

վանոցների հարւածների տակ տրորւում ու,
իբրև խուլ արձագանք, ճարճատում են ա-
ւազի հատիկները:

Մէկը միւսից օտար, մէկը միւսից ինքնա-
բաւական, կուշտ ու վանող դէմքեր,—ինչ-
պէս սինեմատօգրաֆի էկրանի վրայ, —դա-
լիս և անցնում են առաջովս:

Սակայն՝ դրանցից և ոչ մէկը չի կաշկան-
դում իմ հայեացքը:

Ես որոնում եմ միայն մէկին, իմ աչքե-
րը փնտրում են միայն նրան, որի համար
յաճախում եմ այս այգին ու ժամերով մեխ-
ուում այս չոր տախտակին:

Ահա մի գեղուհի, շրջապատւած մի խումբ
երիտասարդներով, իմ կողմն է գալիս, երեկ՝
կողքիս նստարանի վրայ տեղ գրաւելու: Ես
լսում եմ նրա և իրեն օղակող արբանեակ-
ների սրախօսութիւնները, ծիծաղն ու ան-
հոգ հոհուցները: Սակայն՝ երբ նրանք ինձ
են մօտենում, ջրաղացի ջրի պէս կտրում
է աղմուկը: Բարձրացնում եմ գլուխս ու
հանդիպում մի շարք հայեացքների, որոնք
տնտղում են իմ, գաւառական խղճուկ ու-
սուցչիս, աղքատիկ հագուստը, հսամաշ գլշ-
խարկն ու... չածիլած երեսս: Ես նրանց

դէմքերի վրայ կարդում եմ վիրաւորւած
արժանապատւութեան ու նողկանքի շեշտեր:
Մի անտեսանելի ոյժ հրում է ինձ իմ տե-
ղից. ես վեր եմ կենում ու փոխում նստա-
րանս

Այդ ըոպէին, ինչպէս հեռւից սահող շո-
գեկառքի լապտերների լոյսը՝ զգում եմ
ինձ վրայ յառած զոյդ աչքերի նայւած-
քը: Ես նայում եմ, և այդ աչքերը ժպտում
են մեղմ փաղաքշանքով ու եթերային, խու-
սափող հեշտանքով...

Նա է՝ իր ամուսնու հետ, թևանցուկ:
Ես շփոթւած վեր եմ կենում տեղից ու
հանում գլխարկս: Նա պատասխանում է գըլ-
խի թեթև շարժումով, և նրա աչքերը կրկին
մեղմ ու մտերիմ ժպտում են: Այդ ամենը
ամուսինը չի նկատում: Վեհանձն ու ինք-
նագոն՝ նա, կրծքին սեղմած իր գեղեցիկ
սեփականութեան թերը, անցնում է իմ ա-
ռաջով ու խառնուում ամբոխի մէջ:

Իմ հայեացքը հետապնդում է նրանց. իմ
աչքերը հետախուզում նրան:

Ահա նրա ականջին թառած աղամանդի
հատիկը, որ խաղում, փալփլում է շողերի
մէջ ու հանգչում մարդկանց ուսերի յետեկին.

ահա նրա գլխարկի սպիտակ, ջայլամի փեռուրը, որ իւրաքանչիւր քայլից ցնցւում ու թել-թել ծփում է օդի մէջ...

Ես նրան այլևս չեմ տեսնում...

Նրանք կորչում են ամբոխի մէջ:

Սակայն՝ այդքանն էլ ինձ բաւական է:
Թող մի սոսկ հնարաւորութիւն տայ նա ինձ օրեկան մի անգամ, այսպէս, հեռւից-հեռու, տեսնելու իրեն, օրեկան մի անգամ վայելելու նրա մեղմ ու քաղցրահիւս ժպիտը, որ մի ժամանակ իմ կեանքը գունաւորում ու նրան բովանդակութիւն էր տալիս...

Եւ ուրիշ ոչինչ:

Ես գիտեմ, որ շատ և շատ արժէքների հետ միասին նա ևս անհետ կերպով կորած է ինձ համար:

Գիտեմ նմանապէս, որ մեր ճանապարհները, ինչպէս եղանու երկու ճիւղեր, միմանց երբէք չեն հանդիպի:

Բայց և այնպէս՝ այս երկու շաբաթը, երբ ես նրան ճակատազրօրէն հանդիպեցի այս հեռաւոր ծովային կուրորտում, իմ մէջ զարթեցրեց նա իմ ողջ անցեան և այն օրերը, երբ դեռ մարած չէր իմ հոգու արեր, երբ ես ապրում էի իմ ջղերի ամբողջ թափով:

Ինչպէս մոխրի տակ թագնւած կայծեր՝ իմ մէջ շողացին անցեալի նւիրական, բայց այժմ տխուր յիշատակները...

Ես զգացի մի անհուն ցանկութիւն, մի անզուսապ կարիք՝ կանգնած իմ կեանքի աւերակների վրայ՝ նրան նայել ու նրանով, ինչպէս մի հեռադիտակի միջով, գիտել իմ անցեալի հոյակապ ապարանքները, կախարդական պալատները և այդ բոլորի...

Բայց ոչ, միայն այսքան:

Ես նրանից ուրիշ սպասելիքներ, ուրիշ պահանջներ չունիմ...

Յանկարծ՝ իմ յետակն հնչում է մի ծանօթ ձայն, և ես լսում եմ իմ ազգանունը.

— Պարսն Դաստակեան:

Նա էր, իսկոյն ճանաչեցի:

— Վաղը, իմ ամուսինը ճանապարհուելուց յետոյ, մենք կհանդիպենք իրար,— շնչաց նա իմ ականջին՝ իբրև հեռւից քամու բերած մի եղեգնի սիւք ու անհետացաւ ամբոխի մէջ, ինչպէս մի խուսափող ստեր:

Ես այլայլած ոտքի կանգնեցի ու խելակորոյս սկսեցի թափառել մութ ծառուղիները. ապա անցայ ծովի ափը, նստեցի աւագների վրայ և ժամերով ականջ

դրի նիրհող ալիքների շշուկներին ու հերին:

— Վաղը մենք կհանդիպենք իրար,—լսում եմ այս անգամ նրա ձայնը, կարծես՝ ծովի յատակից կամ ալիքների բերանից:

Ուրեմն՝ նրա մէջ դեռ չի մարել հին կրակը. նա ինձ դեռ չի մոռացել:

Ուրեմն՝ եթէ այս երկու շաբաթը նա չմօտեցաւ ինձ ու չխօսեց՝ պատճառն ամուսնու ներկայութիւնն էր:

Վաղը,—երբ այդ ամուսինն այլ ևս այստեղ չի լինի, —նոյն որոշ ժամին ես դուրս կդամ այգին, կնսաւեմ նոյն նստարանի վրայ ու սրտատրով նրան կսպասեմ: Այս անգամ նա կդայ սովորականից շուտ, թեթևաքայլ, մեն-մենակ: Նա կսեղմի իմ ձեռքը, մտերամաբար կառնի իմ թեր, և մենք դուրս կդանք այդ ժխորի միջից ու կհեռանանք դէպի ծովի ափը, ուր մեզ ոչ ոք չի լրտեսի, ոչ ոք չի խանգարի:

Ապա մենք կնսաւենք ծովի ափին՝ կապտագոյն մութի մէջ: Նա քնքշաբար կառնի իմ ձեռքը իր ափերի մէջ և կսպատմի իր կեանքից:

Զինջ ալիքները, իբրև ներդաշնակութիւն

նրա խօսքերի, կծփան ու կհեկեկան ծովի ափին: Մեղմ ու զով քամին կշոյի մեր տաք ճակատները ու կփարի մեզ:

Ինչքան շատ ասելիքներ կունենայ նա...

Նա կպատմի իր գուեհիկ ամուսնուց, որին ամեն մի զգացմունք տածում է, բացի սիրուց և յարգանքից. կնկարագրի իր շըապատը, ուր միայն աղամանդը, կերպամն ու վետուրներն են թագաւորում, և որոնց մէջ իր հոգին ամայանում, անապատ է դառնում. կբողոքի իր ստրկական վիճակի դէմ, ուր ինքը մի գերւած թռչունի է նման, որին մխիթարում են միայն նրանով, որ իր վանդակի ձողիկները ոսկուց են ձուլած:

Ապա հառաջանքով կմտաբերի մեր անցեալը, տենչերով, ձգտումներով և զգւանքով լիքն անցեալը, երբ երկուսս էլ վառւած էինք միննոյն գաղափարով. կյիշի ձըմրան այն խաղաղ, անդորր երեկոները, երբ ես, իբրև մի իդէալական և սիրահարւած ուսուցիչ, յաճախում էի նրանց տունը, առանձնանում նրա փոքրիկ սենեակում, նրա հետ ժամերով կանաչ լուսամփոփի առաջ կորագլուխ կարդում, ապա պատմում, վիճում: Եւ երբ անգիտակցաբար մեր արմունկ-

Ները կամ սեղանի տակ մեր ծնկները միւ-
մեանց էին հպւում՝ ինչպէս էինք երկուսս
էլ կարմրում, շփոթւում...

Նա կպատմի այդ ամենը, կափսոսայ, իսկ
արտասուբի տաք կաթիները հատիկ-հատիկ
կընկնին ու կայրեն նրա ափերի մէջ գեր-
ւած իմ դողդոջուն ձեռքերը...

— Վաղը մենք կհանդիպենք միմեանց:

II

Սակայն՝ այսօր եօթերըորդ օրն է, ինչ ե-
րեկոները ես տնից դուրս չեմ դալիս և այ-
դին չեմ յաճախում:

Ամեն առաւօտ, երբ նոր էր բացւում լոյ-
սը, ես դուրս էի դալիս սենեակիցս ու մեն-
մենակ բարձրանում անտառածածկ լեռը,
նստում կանաչների մէջ, սպիթ-պէս դուրս
ցցւած ապառաժի վրայ ու արեգակի ծագ-
մանը սպասում։ Ապա, երբ ծովի միջից,
ծիածանագոյն ալիքները ճեղքելով, դուրս էր
լողում արեգակը և, բարձրանալով դէպի զէ-
նիթը, տաքացնում իմ նստած ժայռը, — ես
իշնում էի սարից դէպի ծովի ափը, պառ-
կում աւագի վրայ, ալեգակի ճառագայթնե-
րի տակ և ժամերով ականջ դնում ծովի

ծանը հեղին։ Կայտառ ալիքները վեր էին
մագլցում դէպի դարիվէր ափը, յաճախ լի-
գում կօշիկներիս կըունկները, խօսում, քըր-
քըջում աւազուտի մէջ և կըկին քարերի հա-
տիկների հետ թաւալգլոր դէպի յետ վազում,
մայր ջրերի կըծքին զարկւում։

Միրեցի ես ծովափնեայ բնութիւնը՝ կա-
նաչի, լեռների ու ջրերի այս հէքիաթական
հիւսւածքը։

Հեռու մարդկանցից, ընկերներից, հեռու
այն շրջապատից, ուր իմ կեանքի ամենա-
տոկուն ու կայտառ տարիները մաշւեցին,
— թւում է, որ բնութեան այս սքանչելի
տարրերը միայն կարող են ամոքել իմ հի-
ւանդ սիրաը, միսիթարել ու անդորրել իմ
խոռված հոգին...

Երեկոները, երբ դեռ նոր էր սկսում
մինել, երբ կուրորտի ճաշարաններում ու
խմարաններում և այգու մէջ դեռ նոր էր
դիշերային կեանքը ծայր տալիս՝ ես տուն
էի վերադառնում ու պառկում քնելու։

Եւ այսպէս եօթն օր երեկոները ես տնից
դուրս չեկայ։

Ես չգնացի որոշւած ժամադրութեանը։
Նրա ցանկութիւնը չկատարեցի...

իմ սենեակը դտնւում է կենտրոնական վայրերից դուրս, կուրորտի մի հեռու, յետ ընկած թաղում:

Այդպէս էր թելադրել իմ, գաւառական ուսուցչիս, նիհար գրպանը:

Այսօր տուն վերադառնալիս շեղեցի ճանապարհս ու անցայ կուրորտի կենտրոնում, ծովափին դտնւող փոքրիկ պարտիզի միջով, ուր միայն հանդստութեան և կազդուրման համար մեծ քաղաքներից եկած ունեոր դասակարգն է յաճախում: Նստած աթոռների վրայ՝ ոմանք լուռ հիացմունքով ծովի կապոյտին են նայում, ոմանք ափերին խռոնւող չարաճճի կոհակներով գմայլում:

Ես մի քանի ըոպէով նստեցի աթոռներից մէկի վրայ ու աչքերս յառեցի կապարի պէս ծանր ու լուրթ ջրերին, որոնց վրայ մի փոքրիկ նաւակ էր լողում: Նաւակի վրայ նստած էր մի երիտասարդ զոյգ: Կինը դեկավարում էր, իսկ տղամարդը՝ թիավարում: Թիակները ասեղնոտում էին արևի ճառագայթների տակ, և փոքրիկ նաւակը՝ կարապի պէս, դանդաղօրէն քերում էր կապոյտ հայելու երեսը:

Այդ ըոպէին կրկին զգացի զոյգ աչքերի

մի թափանցող նայւածք: Գլուխս վեր բարձրացրի և իմ առաջ, հասակովը մէկ, նրան տեսայ:

Ես, շփոթւած, վեր կացայ տեղիցս ու ընդառաջեցի նրան: Նա սեղմեց իմ ձեռքը, ու մենք նստեցինք իրար կողքի:

— Պարսն Դաստակեան, ներեցէք ինձ, ասաց նա անփոյթ քաղաքավարութեամբ, որ իմ ամուսնու մեկնած օրը չկարողացայ այդին դուրս գալ: Երկակայում եմ, թէ դուք այդ օրը որքան էք ինձ սպասել: Հաւատացնում եմ ձեզ՝ այդ օրն ես հիւր էի կանչւած:

Ես ձեռքս սառնօրէն խլեցի նրա ափերից և իմ աչքերն ուղիղ նրա աչքերին յառեցի:

Նրա հայեացքը լողաց իմ աչքերի վրայ՝ առանց խոռվելու իմ հոգու ներսը, ճիշտ ինչպէս այն փոքրիկ նաւակը, որ լողում է ծովի մակերեսոյթին՝ առանց վրդովելու յատակին նիրհող ալիքները:

Որքան փոխւել, որքան խորթացել էին ինձ համար այդ աչքերը...

— Մեր պատահական հանդիպումն այս հեռու կուրորտում, — շարունակեց նա անյիշաշար տոնով, — գիտէք՝ ինձ ինչյիշեցրեց, —

իմ անցեալը, երբ ես դեռ աղջիկ էի: Տէր Աստւած, ինչքան միամիտ էի ես, անփորձ, դեռ աւելին կասեմ՝ յիմար: Յիշում էք՝ ինչպիսի քամիներով էինք տարւած: Մենք ուզում էինք նոյն իսկ քաղաքի ծայրին գըտնւող կաշու գործարանը գնալ՝ սոցիալիզմ քարողելու... Դուք պիտի բանւորներին կազմակերպէիք, իսկ ես՝ բանւորունիներին, հա, հա, հա... Բայց գիտէք ինչ՝ դուք լաւ ճառախօս էիք. ես յիշում եմ ձեր՝ ուսումնարանական հանդէսներին արտասանած ճառերը...

Այդ միջոցին մեր յետևին հնչեց աւտոմոբիլի ոռնոց, և ինքնասլաց մեքենան խորը թնջոցով կանգ առաւ պարտիզի առաջ:

Նա վայրկենապէս լռեց, յետ նայեց, պատասխանեց կառքի մէջ նստած երիտասարդի բարեկին և ջղաձգօրէն ոտքի կանգնեց:

— Ախ, ներեցէք, պարոն Դաստակեան, — ասաց նա ակնյայտնի յուզմունքով, — շատ ափսոսում եմ, որ այս անդամ էլ հնարաւորութիւն չունեցայ ձեզ հետ երկար խօսելու, ինձ սպասում են... Յամենայն դէպու-

շատ ուրախ եմ, որ ձեզ հանդիպեցի: Հաճելի է երբեմն մտաքերել անցեալը:

Ապա մի կարեկցական հայեացքով նայեցինձ ոտքից մինչև գլուխ ու աւելացրեց հովանաւորող ժպիտով.

— Խնդրեմ, եթէ որևէ կարիք ունենաք, դիմեցէք ինձ... առանց քաշւելու... ես այժմ ունեոր եմ... Գիտէք իմ հասցէն՝ «Hôtel de Luxe», այնտեղ շվեյցարին կասէք... ցտեսութիւն, ես գնում եմ,— վերջացրեց նա կտրուկ, բռնեց ձեռքս, սեղմեց և, երեսը դարձնելով, դէպի փողոցը շտապեց:

Երիտասարդն իջաւ աւտոմոբիլից, օգնեց նրան նստելու և ինքն էլ տեղ գրաւեց նրա կողքին:

Եղան բառաչի պէս հնչեց փողը, յետևի խողովակից ծխի ձողիկներ փորթկացին, արագաշարժ մեքենան սլացաւ խճուղու վրայ և մի քանի բոպէում անհետացաւ ծառերի և դարափոսերի մէջ:

Ծովից շնչող քամին մի քանի ակնթարթում կլանեց բարձրացած փոշու նօսը ամպիկները:

Ես երես դարձրի դէպի ջրերն ու քայլերս ուղղեցի դէպի ծովափը:

Նոյն ջինջ ալիքները, փրփուրի ժանեակները կրծքերին, կրկին մազլցում էին դէպի գոգածե ափը, խօսում, քրջում աւաղուտի մէջ ու կրկին շառաչիւնով յետ նահանջում:

Ես տարւում եմ այդ վերադարձող ալիքների հետ դէպի ծովի ներսը, մտքով լողում դէպի հեռու հորիզոններ, դէպի այնտեղ, ուր մայր ովկիանոսն է սկսւում:

Եւ ինձ թւում է, որ իմ ոտների մօտ խոնւող ալիքները բեկորներն են հեռու ովկիանոսում տեղի ունեցած մի հսկայական փոթորկի, որի լեռնանման, վիթխարի ալիքները, հազարաւոր վերստեր կտրելով, դէպի ցամաքն են գալիս, ճանապարհին փոքրանում, մանրանում և, այս անշարժ ափերին զարնւելով, վերջանում և յաւէտ հանգչում:

Իբրև մեծ ալեկոծման վերջին, մեռնող յորձանքներ...

Մոսկա, 1911.

Ա Ա Յ Ա Ն Զ

I

Դուան զանգն երկար ու ուժգին տւին: Տանտիրուհին, — երկի դժգոհ յաճախակի զանդահարութիւնից, — նախասենեակում մըրթմըրթաց քթի տակ և, երկու անդամ հազարով, բաց արեց դուռը՝ սովորական հարցը բերանին.

— Ո՞ւմ էք կամենում:

— Ներեցէք, եթէ Զեզ անհանգստացնում եմ, — եղաւ պատասխանը, — ասացէք, խընդրեմ, այստեղ է ապրում ուստահպատակ պարոն Արսէն Բոստոմեանը:

Տանտիրուհին մի զննող հայեացք ձգեց անծանօթի վրայ, որ խօսում էր մաքուր ֆրանսիական արտասանութեամբ, իսկ ձայնը հնչում էր ոստիկանական վստահ շեշտերով: Ապա զիջողաբար ներս քաշւեց դուռ առաջից, ցոյց տւեց իր գիշերօթիկի սե-

նեակն ու, մի փոքրիկ դող սրտումը՝ առաց.

— Այս, պարհն, այստեղ է ապրում, ահա նրա դուռը, կարծեմ տանն է:

Անծանօթը թխթխկացրեց:

Ներսից լսւեց ոչ ֆրանսիական ակցէնտով.

— Entrée.

Նա բաց արեց դուռն ու համարձակ քայլերով ներս մտաւ:

Մի փոքրիկ, անշուք կահաւորւած սենեակ էր՝ Փարիզի Լատինական թաղի մի յետ ընկած փողոցում։ Փոքրիկ թղթախաղի սեղանի վրայ, —որ, ըստ երևոյթին՝ գրասեղանի տեղ էր ծառայում, —թափթփւած էին մի կոյտ հաստ ու բարակ, անկազմ գրքեր, բուլորն էլ, կարծես՝ ընթերցանութիւնից նոր ընդհատած։ Յատակի վրայ փուած էր «Լ'Աստանի»-ի համարը։ Սենեակի անկիւնում, հնամաշ մահճակալի կողքին, աչքի էր ընկնում ֆրանսիական տեսակի լւացարանը, որի՝ մինչեւ եզրերը լիքը սապնեջը մէջ անշարժ հանդիսաւորութեամբ լողում էին ծխախոտի աւելցուքներն ու լուցկու խանձւած փայտիկները։ Մի փոքրիկ նաւթահոտ, վտիտ

լամպ կանաչ կարտոնէ լուսամփոփի տակից հազիւ ցրում էր մութը։

Անծանօթը, շտապ ու վարժ, այս ամենն աչքի անցկացրեց ու կէս քաղաքավարի, կէս պաշտօնական-կարեոր տոնով հարցրեց։

— Եթէ չեմ սխալւում՝ դուք էք ոռւսահըպատակ Արսէն Ռոստոմեանը։

Եւ, չսպասելով պատասխանի, շարունակեց՝ միաժամանակ պորտֆէլից մի ինչ որ լուսանկար հանելով.

— Խնդրեմ՝ մի այլայլէիք. եղէք անկեղծ ու ինձանից ոչինչ մի թագյնէք։ Ես ձեզ լաւ եմ ճանաչում։ Գիտեմ՝ ով էիք դուք և ինչ էք այժմ։ Ահա և ձեր լուսանկարը... կարծեմ՝ այժմ պարզ է, թէ ով եմ ես...

Ռոստոմեանը շուտով վերականգնեց իր ներքին հաւասարակշռութիւնն ու փորձւած դերասանի նման՝ իր դերը մտաւ։ Նա գիտէր, որ նման դէպքերում հարկաւոր է ըստ կարելւոյն քիչ իսուել և իւրաքանչիւր պատասխանը տասը չափել և մի կտրել։

Մի շարք հարց ու փորձերից յետոյ՝ անծանօթը, վերջապէս, անցաւ բուն խնդրին։

— Իսկ ասացէք, խնդրեմ, նիւթական ինչ միջոցներով էք այստեղ ապրում, — հարցրեց

նա՝ հետախոյզ հայեացքը Ռոստոմեանի աշքերին մեխելով:

Ռոստոմեանը շփոթւեց. ի՞նչ պատասխան տար, որ նպատակայարմար լինէր:

— Ծնողներիցս,—ասաց վարանելով:

Անծանօթը քմծիծաղ տւեց ու վրայ բերեց հեղնաբար.

— Զգիտէի, որ բոլոր անառակ որդիների հայրերը ներողամիտ են...

Ռոստոմեանը աւելի ևս շփոթւեց, իսկ անծանօթի խորամանկ-ժպտացող ու սիրալիր դիմագծերը սառը պաշտօնական դասաւորութիւն ստացան:

— Ո՞չ, պարհն, դա բաւական չէ,—ասաց անծանօթը ոտքի կանգնելով:—Անհրաժեշտ է, որ ձեր ծնողների այդ նպաստը վաւերացւած լինի տեղական նօտարի կամ ուտիկանութեան միջոցով: Հասկանում էք: Դրա համար ձեզ տալիս եմ երեք շաբաթ ժամանակամիջոց: Երբ այդ վկայաթուղթը ձեր ձեռքին կլինի՝ միայն այն ժամանակ կարող էք դուք բնակութիւն հաստատել Ֆրանսիայի սահմաններում: Այլապէս... հասկացաք: Ես ժամանակին կմտնեմ: Ցտեսութիւն:

Տանտիրուհին, որ մինչ այդ շնչազուսպ սպասում էր նախասենեակում՝ ճանապարհեց արտասովոր հիւրին ու կրկին ինչ որ բան մըթմըթաց քթի տակ:

— «Կրկին թակարդներ»...—ատամները կրծտելով ասաց Ռոստոմեանն ու ոտքի կանգնեց:

Նրա համար պարզւեց այդ այցելութեան իմաստը: Պատրւակներ էին որոնում:

Նոյն միջոցներին դիմեցին, երբ նրան Շւէյցարիայից հեռացնել էին ուզում: Ձերեկւայ պէս պարզ էր, որ այստեղ էլ նրան հանգիստ չպիտի տային: Եւ ամեն անգամ օրէնքի, կարելիութեան սահմանների մէջ:

— Նողկալի՛ էք դուք, եւրոպական քեռիներ. ուր է թէ ոռւս ոստիկանութեան խիզախութիւնը, աներկբայութիւնն ունենայիք: Գաղտագողի էք, խորամանկ ու նենգ... Գիտեմ՝ ենթադրում էք, որ ես որ և է յեղափոխական կուսակցութեան նպաստներով եմ ապրում. դուք այդ էք ուզում հաստատել: Հաստատեցէք...

Ցանկարծ կանգ առաւ, շուրջը զգուշաւոր նայեց.

— Ի՞նչպէս, իսկ եթէ հաստատե՞ն...

Մարմսովը մի սարսուռ անցաւ, կուչ ե-
կաւ, վերարկուն ուսերին քաշեց և, ձեռնե-
րը կոնատակերին սեղմելով, մեղմ մրմնջաց.

— Ցուրտ է, կարծես թէ մրսում եմ:

Սենեակն իսկ որ ցուրտ էր: Դուրսը փե-
տրւարի անհանգիստ քամին մերթ պահանջ-
կոտ հրհրում էր խարիսուլ պատոհանը, մերթ
լացակամ վայում նրա ճեղքերի մէջ:

— Madame Lardery,—կանչեց Ռոստոմ-
եանը՝ նախասենեակում ոտաձայն լսելով:

Տանտիրուհին խորհրդաւոր ու մտազբաղ
ներս մտաւ:

— Madame Lardery, ինդրեմ վառէք
վառարանը. սենեակս ցուրտ է, այնպէս չէ:

— Այն, պարոն, բայց քարածուխ չկայ,
վերջացել է:

— Այն ժամանակ հարկաւոր է գնել:

— Ես էլ եմ կարծում, որ հարկաւոր է
գնել,—պատասխանեց պառաւը՝ «գնել» բա-
ռը շեշտելով:

Ռոստոմեանը լրեց:

— Լաւ, տիկին,—ասաց նա.—գիտեմ,
որ քարածուխը վերջացել է. հասկանում
եմ. միայն, ի սէր Աստծոյ, մի քանի օր էլ
սպասեցէք. շուտով, շատ շուտով կտամ. ան-

հոգ կացէք: Մենք, ոռւսաստանցիներս, ու-
րիշներին երբէք չենք զրկում:

Պառաւի դէմքով մի թոյլ ժպիտ անցաւ:
Երեսում էր, որ նա ճիգ էր գործ դնում հա-
ւատալու իր գիշերօթիկի խոստմանը: Փոք-
րիկ լուռթիւնից յետոյ նա կըկին մտա-
զբաղ դէմք ընդունեց. նա պատրաստում
էր ինչ որ բան հարցնելու, բայց չէր հա-
մարձակւում:

— Ներեցէք, պարոն Ռոստոմեան, որ
հետաքրքրում եմ,—սկսեց վերջապէս պա-
ռաւը.—Ինչքան էլ չինի՞ ձեր տանտիրուհին
եմ, պարտաւոր եմ իմանալ: Ասացէք, իսկնդ-
րեմ, ով էք դուք:

Ռոստոմեանը ցնցւեց:

— Ահա երեք ամիս է, ինչ վարձել էք իմ
սենեակը,—շարունակեց պառաւը.—տանից
դուրս չէք գալիս, ձեզ ոչ ոք չի յաճախում:
Յետոյ,—ես և ամուսինս փորձել ենք,—գի-
շերները քնում էք շատ անհանգիստ: Երէկ
գիշեր երկար ժամանակ զառանցում էիք. ա-
մուսինս դռան ճեղքից ձեզ ականջ էր դը-
նում, բայց ոչինչ չհասկացաւ. ասում էր,
որ ձեր լեզւովն էիք խօսում: Յետոյ սկսել
էք երազի մէջ լաց լինել, հեկեկալ: Ասա-

ցէք, խնդրեմ, դուք որ և է յանցանք չէք
գործել:

Ռոստոմեանը, տարակուսած, պառաւի աշ-
քերին նայեց:

— Կամ թէ չէ՝ տերըորիստների կամ ա-
նարիսխաների խմբին չէք պատկանում:

— Ինչպէս կարող էք թոյլ տալ ձեզ նը-
ման ենթադրութիւններ անել, — պատասխա-
նեց Ռոստոմեանը, վրդովւած:

— Եւ ոչ էլ սոցիալիստների, — շարունա-
կեց պառաւը:

— Երբէք, գաղափար անգամ չունիմ:

— Հապա ինչո՞ւ այսօր գաղտնի ոստիկանն
այցելեց ձեզ:

Ռոստոմեանը շինծու ծիծաղեց:

— Այդ էր ձեր ենթադրութիւնների հի-
մունքը, տիկին: Երևակայեցէք, մի դատարկ
քան: Անցագրիս ժամանակն էր մօտենում,
և նա եկել էր նախազգուշացնելու: Ամեն մի
ռուսահպատակի պատահում է: Միանգա-
մայն անհոգ կացէք:

— Երանի՛ թէ այդպէս լինի, — թեթևացած
յոգոց քաշեց պառաւը. — Ես սաստիկ վախե-
նում եմ ուսւ տերըորիստներից. Երևակա-
յեցէք, որ ամուսինս էլ է վախենում. լրա-

գըրները նրանց այնպէս են նկարագրում. օ,
ես սաստիկ ատում եմ դրանց...

— Ես էլ, տիկին, ես էլ եմ ատում, բո-
լորին էլ ատում եմ...

Ու մի կերպ պառաւին սենեակից հեռա-
ցրեց, կըկին թեք ընկաւ մահճակալի վրայ
և փաթաթւեց վերարկուի մէջ:

II

Այն հաւասարակշուռութիւնը, որ Ռոստո-
մեանը հմտօրէն պահպանեց ոստիկանի ներ-
կայութեամբ, պայթեց վերջինիս հեռանա-
լուց անմիջապէս յետոյ անհանգիստ մտո-
րումներով:

Սակայն՝ Ռոստոմեանը ճիգեր էր գործ դը-
նում նրանց չենթարկւելու:

Դրա համար նա վեր կացաւ մահճակալից,
մի նախայարձակ շարժումով դէն շպրտեց
վրայից վերարկուն ու սկսեց հաստատուն
ու մեծ-մեծ քայլերով անցուդարձ անել
սենեակի մէջ, — այնպիսի քայլերով, երբ
մարդ անհաճոյ կամ անլուծելի մտքեր ու-
ղեղից ցըել է կամենում:

Հստ երևոյթին՝ այդ նրան չյաջողւեց:
Նա շուտով նստեց աթոռին, վառեց ծխա-

խոսն ու բերանին դրեց։ Բայց նա աւելի ծխախոտի թուղթն էր ջղայնօրէն կրծոտում, քան ծխում։

— Վկայաթուղթ...—մրմնջաց ինքն իրեն, —որտեղից կարող եմ վկայաթուղթներկայացնել, երբ նոյն իսկ հաստատ չդիտեմ՝ կենդանին են ծնողներս, թէ մեռած։

— Վկայաթուղթ չկայ, —ասացնա կտրուկ ու մերժող, կարծես, առաջին մի մարդ տեսնելով։

«ԱՌ, ուրեմն դուք յեղափոխական կուսակցութիւնների նպաստներնիվ էք ապրում», —պատասխանեց նա ինքն իրեն մի ուրիշի ձայնով։

— Պատասխան տալ չեմ կամենում, հասկանո՞ւմ էք։

«Այն ժամանակ դուք այլևս անկարող էք մեր երկրի սահմաններում տեղ գտնել։»

— Խնդրեմ, խնդրեմ, ամենամեծ հաճոյքով. բարեբախտաբար՝ ողջ երկրագնդի վրայ միայն ֆրանսիական դրօշակը չէ ծածանւում։

Յանկարծ՝ նրա առաջ պատկերացաւ պառաւ տանտիրուհին, որ պաղատագին ձայնով, արտսուաթոր աչքերով նրա փէշիցն էր քաշում։

«Ո՞ւր, պարտն, ո՞ւր. իսկ սենեակի վահրձը՝ երեք ամիս է չէք վճարել. իսկ քարածուխի փողը՝ տասն և ութ անգամ վառել էք. ութ ձու էք վերցրել, մէկ և կէս ֆունտ իւղ, հինգ բաժակ կաթ. խնդրեմ՝ վճարէք, բարի եղէք. մեր ապրուստի միակ աղբիւրից էք կտրում։»

Նա այլայլած վեր կացաւ տեղից. մօտեցաւ լւացարանին ու ծխախոտի աւելցուքըն ափսէն նետեց։

«Ես արդէն զառանցում եմ, —մտածեց նա. —ինչու, միթէ իմ նախկին առկունութիւնից ոչինչ չէ մնացել. կարծես՝ ճակատագիրը դէպի ինձ աւելի սիրալիր է եղել, քան այժմ։ Կանցնեմ Անգլիա կամ Ամերիկա... Ոչ, ես չեմ ընկճւի. ես կուրծք կտամ, կը յաղթահարեմ կեանքի բոլոր խոշընդուները. ես այդ կանեմ, որովհետեւ իմ անունն է Արուէն Ռոստոմեան»...

Կարծես՝ մի խիզախ քամի փչեց սաստկօրէն ու ցրեց օգոստոսեան կարկտի ամպերը, ուրոնք մի փոքր առաջ թանձրացել էին երկնքի կրծքին։

Ու նա հանգստացած նստեց աթոռին։

Կողքի սենեակից նրա ականջին հասաւ մի բարձրաձայն ընթերցանութիւն։ Հարեանու-

հին էր, թաղի տարրական ուսումնարանի վարժուհին։ Բայց նա աւելի շուտ ոգում էր, քան կարդում։ Նրա առողջանած բառերը հընչում էին պարզ ու որոշ՝ որպէս ջրի կաթիլներ, որոնք ծորակից հատհատ պոկտում ու գետին են ընկնում։

«Երկի՛ վաղւայ համար է պատրաստում», —մտածեց Ռոստոմեանը։

Եւ նրա երեակայութեան մէջ պատկերացաւ ընդարձակ դասարանը՝ առաւօտեան վաղ դասին։ Ուսուցչական ամբիոնից հընչում է վարժուհու նոյն այդ ընթերցանութիւնը. քառասունի չափ՝ դէպ նստարանները հակւած վտիտ զլուխներ կլանում են իւրաքանչիւր խօսքն ու առաջներին դրած թղթի վրայ անց կացնում։ Տիրում է մի սաստւած լութիւն։ Միայն գրչածայրերի ճռոցներն են, որոնք, որպէս աշխատանքի նւագ, արձագանք են տալիս դասարանի լուռ անկիւններում։

Ռոստոմեանի մէջ առաջացաւ աշխատելու մի բուռն տենչ։

Նա բնագդով վերցրեց յատակին ընկած «L'Humanité»-ի համարն ու սկսեց կարդալ։ Հստ սովորականին՝ նա աչքի անց կացրեց ար-

տաքին լուրերի բաժինը, ուր Ռուսաստանի տեղեկութիւններն էին տպւում։ Բայց նա յիշեց, որ այդ լուրերն երեք օր առաջ էր կարդացել։ Թերթը նա մի կողմ նետեց։

«Հարկաւոր է աւելի կարևոր և լուրջ աշխատանքով պարապել», —մտածեց նա ու յիշեց յանկարծ, որ երկու ամիս առաջ ձեռնարկել էր Գուստավ Հերէի «Leur Patrie»-ի թարգմանութեանը։ Նա վերցրեց պատուհանից գիրքն ու ձեռագիրը և նստեց սեղանի առաջ, թարգմանեց հազիւ մի երես... Աշխատանքը նրան ձանձրալի թւաց։ Նա սովորչէր նստակեաց պարապմունքի։ Թերթեց գիրքը՝ բաւականին խոշոր էր։ Ե՞րբ պիտի այդ ամենը թարգմանէր, վերջացնէր... կամ թէ չէ համակրում էր Հերէին։ Նա այդ չգիտէր...

Ոչ, ամենայն հաճոյքով մի այլ բան կանէր։

Ու մտաբերեց մի այլ աշխատանք, որ աւելի գործնական էր և հեշտ իրագործելի։ Դա լրագրական թղթակցութիւնն էր. տալ թըղթակցութիւնների մի շարք Փարիզի՝ Ֆրանսիայի, արտասահմանի կեանքից։

Միայն թէ չդիտէր, ինչ լրագրի ուղարկէր։

Հայկական թերթերին չէր կարող, որովհետև
նա, տարիներից ի վեր հեռացած կովկասից,
ապրած ու գործած օտար միջավայրում, ծա-
նօթ չէր հայ իրականութեան ու հայ լեզւին:

Մայրաքաղաքի մեծ թերթերին փորձել էր
ու մերժում ստացել: Մնում էին կովկասի
ուսւ թերթերը, որոնք կարող էին հիւրընկա-
լել, թերևս, և վարձատրել:

Մտածեց, վճռեց ու գրիչը ձեռքն առաւ:

«Սինդիկալիստական հոսանքը ֆրան-
սիական բանւորութեան մէջ»—գրեց վեր-
նագիրն ու տակը գիծ քաշեց: Սկսեց ու մի
քանի տողից յետոյ կանգ առաւ: Նախադասու-
թիւնսերը շատ դժւար էին կազմում, իսկ
մտքերը ձևակերպել չէր կարողանում, որով-
հետև յօդւածներ նա երբէք չէր գրել և առ-
հասարակ գրական աշխատանքով չէր զբաղւել:
Սրանեղութիւնից նրա ողջ մարմնով մի սար-
սուռ անցաւ, ու մի խորը հառաչ պոկւեց նը-
րա կրծքից:

— Թո՛ւ, անիծեալ լինիս,—ասաց նա ու
ջղային մի ուժեղ ցնցումով կոտրեց գրչա-
ծայրը: Ապա թանաքոտ թուղթը ափի մէջ
ճմռեց ու դէն շալրտեց: Նա զգաց իր անկա-
րողութիւնը:

Նրա կոկորդի մկանները սեղմւեցին, ար-
տասուքը խեղդեց նրա բուկը:

Նա յուսաբեկ ոտքի կանգնեց:

Հարևանուհին վերջացրել էր ընթերցանու-
թիւնը: Նրա մօտ հիւր կար: Լուռմ էր մի
տղամարդու ձայն, որ սիրանւէր ու խորհրդա-
ւոր ինչ որ բան էր պատմում: Կինը ուշա-
գիր լսում և երբեմն ընդմիջում էր:

Եւ Ռոստոմեանը սրտի խորքից նախան-
ձեց խօսող պարոնին:

Որքան կուզէր ինքն էլ մի այդպիսի հա-
րազատ ու սրտակից ունկնդիր ունենալ..

III

Առաւօտեան Ռոստոմեանը վեր կացաւ
մահճից մի սոսկալի գլխացաւով: Զառանց-
կոտ, անքուն գիշերից ու խոռվայոյդ մտո-
րումներից յետոյ՝ նա իր ողջ մարմնի բոլոր
յօդերի մէջ զգում էր մի մորմոքւող ցաւ,
ինչպէս երկարատև մարմնամարզութիւնից
կամ ձիարշաւից յետոյ: Իսկ գլխին, նրան թը-
ւում էր, թառել էր մի սկ ազուաւ և կտցա-
հարում ուղեղը:

Նա վերցրեց սեղանի վրայից հայելին ու
երկար, գննող հայեացքով դիտեց իրեն:

Արտացոլող ապակու մէջ նա հանդիպեց իր զոյգ յոգնած ու անհրապոյր աչքերին, որոնց մէջ դեռ ևս օրօրւում էին նախկին եռանդի ու վստահութեան մեղմ ալիքները։ Սակայն՝ թերթեռնքների տակ դասաւորւած կապոյտ օղակները, կարծես թէ, սպառնում էին այդ վերջին օրօրքն էլ կլանելու։

Նա, իր տեսքից ահաբեկ, հայելին մի կողմ նետեց։

Դուռը թխթխկացըին։

Տանտիրուհին էր։

Երկու ձեռքով յետեին մի բան թագցրած՝ նա սենեակի մէջ տեղն անցաւ ու խոստացող, սիրալիր ձայնով, — այնպէս, ինչպէս փոքրիկ երեխաներին մի ցանկալի նւէր են մատուցանում, — դիմեց Ռոստոմեանին։

— Պարհն Ռոստոմեան, ի՞նչ կտաք ինձ, եթէ ձեզ մի հաճելի լուր ասեմ... Դուք ասում էիք, որ ձեր եղբայրը շուտով ժընե պիտի գայ և այնտեղից ձեզ համար նամակ պիտի ուղարկի, այնպէս չէ...»

— Խաբում էք. ուր է, շուտով ինձ տւէք, — ասաց Ռոստոմեանը՝ դէպի պառաւը ցատկելով։

— Ահա նամակը. ես փոստի դրոշմից ի-

մացայ, ժընկից է. կասկած չկայ, որ ձեր եղբայրն է։ Երկակայեցէք, մաքիս տալիս էր, որ դուք այսօր նամակ պիտի ստանաք։ Այս գիշեր նոյն իսկ երազումս տեսայ...»

Ու պառաւի դէմքով մի երանաւէտ ժայիտ անցաւ...»

Ռոստոմեանը անհամբերութիւնից դողում էր։ Իր սպասած նամակն էր։ Նա շնչազուսպ, համարեա թէ մի հայեացքով, կլանեց գրւածը։

«... ի նկատի առնելով ա. երկրում ծաւալւող ուշակցիան ու կուսակցական կազմակերպութիւնների քայքայումը, բ. կուսակցութեան ունրա մօտ կազմակերպութիւնների նիւթական ողբալի վիճակը, — սրանով ծանուցանում ենք, որ այսուհետեւ անկարող ենք ձեզ նիւթական օժանդակութիւն ցոյց տալ։ Դրա համար կարող ենք մատնացոյց անել էմիգրանտների կասսան, որի...»

Ռոստոմեանը չկարողացաւ շարունակել։ Թուղթը նրա ձեռներից սողաց ու գետին ընկաւ։ Նրա աչքերը սեացան, ու յատակն օրօրւեց նրա ոտների տակ։ Նրան թւաց, որ առաջը կանգնած պառաւը մթագունեց, սեացաւ ու, որպէս մի տձե ճիւաղ, իր սուր ճանկերը իր կոկորդին մեխեց։ Բիբերի մէջ

կայծակեցին հրեղէն լեզւակներ, որոնք, ոստոստելով, միմեանց գլուխ անցնելով, լուծեցին ու չքացան խաւարի մէջ:

Նա ուժաթափ աթոռին ընկաւ:

— Ի՞նչ պատահեց ձեզ, պ. Ռոստոմեան, — գոչեց պառաւը սարսափահար: — Զլինի՞ թէ մի գոյժ կարդացիք. հա, ասացէք, ձեր եղբայրը կենդանի՞ է...

Ու, մօտենալով Ռոստոմեանին, բրբոթեց նրա կուռը:

Ռոստոմեանն անխմաստ հայեացքով պառին նայեց:

— Հա, ասացէք, գուցէ, Տէրն մի արացէ, ձեր ընտանիքնեմն է մի դժբախտութիւն պատահել, կամ որ և է մէկին տերը որի՞ են ենթարկել. ախ այդ Ռոստոմեանը...

Ռոստոմեանը, կարծես, ուշքի եկաւ, ոտքի կանգնեց, երկու ձեռով բռնեց գլուխն ու մի այնպիսի շարժում արաւ, ասես, մի բան այնտեղից հանեց ու դէն շպրտեց: Յետոյ՝ կարեկցութիւն հայցող ձայնով դիմեց պառաւին.

— Ինչպէս չէ, տիկին. երեակայեցէք, ինչպիսի ոճագործութիւն. Գիշերը երկու հոգի, — երբ հայրս քնած է լինում, — մտնում են մեր խանութը...

— Բայց ներեցէք, ինդրեմ, — տարակուսանքով ընդմիջեց տանտիրուհին. — չէ՞ որ դուք ասում էիք, որ ձեր հայրը վաղուց է վախճանւել...

Ռոստոմեանը շփոթւեց, ուղղեց սխալը ու գրգռած շարունակեց.

— Ի հարկէ՝ վախճանւել է... բայց խօսքըս խանութին է վերաբերում, որի Փիրման հօրս անունով է. գործը այժմ եղբայրս է վարում...

— Ուրեմն՝ երկու եղբայր ունիք, — ընդմիջեց կրկին պառաւը՝ այս անգամ ուսերը վեր քաշելով. — իսկ առաջ ասում էիք, որ մի եղբայր ունիք, ինժեներ է և մեծ ոսճիկ է ստանում:

Ռոստոմեանի ուղեղում ամեն ինչ խճճւեց: Նա մոռացել էր, թէ ինչպէս է ներկայացրել պառաւին իր ընտանեկան կացութիւնը, մոռացաւ նոյն իսկ, թէ ինչ պիտի ասէր այժմ: Այդ անյարմար դրութիւնը նրան աւելի գրգռեց, ունա, զայրացած, անկարող այլևս իրեն զսպելու, գոռաց պառաւի վրայ.

— Թողէք, ինդրեմ, ձեր հարցուփորձը. Ի՞նչ էք ուղում ինձանից. մի սենեակի վարձեմ պարտ՝ կտամ, իսո չեմ փախչում... Ազա-

տեցէք ինձ, ի սէր Աստուծոյ, ձեր ներկայութիւնից... դուք իմ ջղերը քայքայեցիք, դուք ինձ կվելագարեցնէք...

Պառաւը վախից գունատւեց ու կուչ եկաւ, ինչպէս մի մրցւած շոր, ու յետյետ քաշւեց՝ կմկմալով.

— Ես ոչի՞նչ... տեսնում էք, ոչի՞նչ չեմ ասում... ես հեռանում եմ...

Եւ, դռան շէմքն անցնելով, մըթմըթաց ինքն իրեն.

— Զարմանալի և տարօրինակ մարդիկ էք դնւք, ոռւսաստանցիներդ...

IV

Ալբուստի այն աղբիւրը, որտեղից Ռոստոմեանի համար միակ սպասելիքը պիտի բղաէր, ընդմիշտ ցամաքեց:

Այժմ միակ յուսատեղին էմիգրանտների կասսան էր, բայց կասսան բաւարարութիւն տալ նրա կարիքներին չկարողացաւ: Միջոցները պակասում էին:

— Մենակ դուք չէք, ձեզ պէսները շատ են, — առարկեց գանձապահ-ուսանողը, երբ Ռոստոմեանը նկարագրել ուզեց իր անտանելի վիճակը:

Միակ նպաստը, որ նա ստացաւ, օրեկան մի ժում ձրի ճաշն էր:

— Մենակ նա չէր, նրա պէսները շատ էին...

Իսկ սենեակի վարձը, պարտքէրը...

Դրանց համար նա ոչ մի ելք չգտաւ:

Ու մտամոլոր դուրս եկաւ մեծ քաղաքի պրոսպէկտները թափառելու:

Նա երկար թափառեց փողոցներում, ժամերով նստեց ծառախիտ այգու ցուրտ նըստարաններին:

— Ի՞նչ պիտի լինի սրա վերջը, — հարցնում էր ինքն իրեն և թողնում անպատասխան:

Ու նորից վեր էր կենում, անցնում ծառուղիներով, դուրս գալիս փողոց՝ անվերջ սալայատակները չափչփելու:

Ու կանգնում էր յաճախ մի հաստաբուն ակացիայի, յայտարարութիւնների տախտակամածի կամ լապտերների երկաթէ սիւների առաջ ու անվերջ մըմնջում.

— Ի՞նչ պիտի լինի սրա վերջ...

Փետրւարի խոնաւ քամին փարւում էր նրան, առնում իր սառը գրկի մէջ ու գաղտագողի թափանցում նրա հագուստի տա-

Կը, լիգում նրա տաք մարմինը։ Իսկ մայթերի ցեխն ու ջուրը լցւում էին նրա ծակ կօշիկներն և թրջում գուլպաները։

Նա նստեց նորից այգու խոնաւ նստարանին ու խորասուզւեց մտածմունքների մէջ։

— Պիտի գըեմ, պիտի գըեմ. այն, միայն նրանք կարող են ինձ խնայել. ողջ երկրագնդի երեսին էլ ուրիշ ոչ ոք...

Ասաց, որոշեց ու շտապ-շտապ քայլերը ուղղեց դէպի տուն։

Սենեակ մտնելուն պէս՝ առաւ թուղթն ու գրիչը և մի երկար նամակ գրեց։

Ծրաբի վրայ մակագրեց հօր հասցէն։

Դա առաջին նամակն էր երեք տարւայ ընթացքում։

Հաշտութեան, դարձի, զղջման նամակը...

Ու, չսուուզելով գրածը, շուտափոյթ ծրաբեց ու տարաւ փոստարկը նետեց։

Կէս գիշերից անց էր։ Ողջ բնակարանը քուն էր մտել։ Չէր լսում ոչ ձայն, ոչ ծպտուն։ Միայն նախասենեակի ժամացոյցի ճօճանակն էր, որ հեքոտ թակում էր լուռ խաւարն ու հեկեկում մերթ կողքի սենեակում, մերթ հեռու, ինչ որ մութ անկիւնում։

Ժամացոյցի միալար ճօճումին դաշնակում էր և Ռուտումնանի մահճակալի հիւանդու ճռուցը։

Այդ գիշեր էլ նա անքուն պիտի անց կացնէր...

Երկու նամակները նրան հանդիսաւ չէին տալիս... Արտաքսման և նահանջի նամակները...

▽

Անցաւ երկու շաբաթ։

Տանտիրուհին, —այժմ արդէն ամուսնու միջամտութեամբ, —վճռական յայտարարել էր, որ մինչև երկու շաբաթ պիտի սենեակի վարձը ստանայ՝ այլապէս ոստիկանութեանը պիտի դիմէ։ Ծնողներից սպասած հեռագիրը, —որով նա ենթագրում էր փող ստանալ իր նամակն անմիջապէս տեղ հասնելուց յետոյ, —չեկաւ։ Ոստիկանութեան գաղտնի ագենտը մի անգամ էլ էր այցելել՝ յիշեցնելու վկայաթղթի մասին։

Այդ ամբողջ ժամանակամիջոցն անց էր կացը ել համարեա կիսաքաղց։ Բաւականացել էր միայն մի ժում ձրի ճաշով։

Միւս կողմից պատահապէս իմացաւ, որ

իրեն ոստիկանութեան մատնողն իր նախկին ընկեր Զուբրինն է:

Ռուսաստանի մասին կարդում էր մէկը միւսից անմիտիթար, յուսահատական լուրեր: Մի սև ու յոռի մղձաւանջ սաւառնում էր երկրում, ու ճգնաժամն օրէցօր դառնում էր վհատական...

Ա՛խ, գոնէ մի ընկեր, մի սրտակից մարդ, որի հետ բաժանէր իր մտորումները, իր վիշտն ու կասկածը...

Նրանք չկային: Նրանք ցան ու ցիր էին: Ոմանք մնացին կուի դաշտում, ոմանք բանտերումն են փթում, իսկ շատերը չկան, օտար են, մոռացած՝ ընկեր ու գործ...

Եւ երանի էր տալիս նրանց, որոնք ընկել էին իրենց կուռքերի պատւանդանների վրայ...

Մի օր ռեստորանի առաջ հանդիպեց իր հայրենակից մի ծանօթ վաճառականի: Որոշեց նրանից պարտք խնդրել: Դժւար էր նրա համար. բայց ստիպւած էր: Ուրիշ ելք չկար:

Երբ, ձեռքում ոսկէ դրամներն ամուր բըռնած, հեռացաւ վաճառականից, նրան թւաց, որ փողը նրա համար այնքան շլացուցիչ չէ եղել, ինչպէս այդ օրը, որ նա երբէք այդ-

պիսի յափշտակութեամբ ոսկու կտորները ափի մէջ չի սեղմել, ինչպէս այդ վայրկեանին:

Եւ յոզնած ու բեղարած երկարատև թափառումներից, քաղցից ու մտորումներից, նա նստեց մեծ պրոսպէկտի նստարանի վրայ՝ փոքր ինչ շունչ քաշելու:

Նրա առաջ փռում էր երկար ու լայն փողոցը, որի միջով հոսում էր մեծ քաղաքի որոտընդուստ կեանքը: Բազմապիսի կառքերը տենգուտ փութով սահում էին իրար յետեկից: Ելեքտրաքարշերի զանգը, աւտոմոբիլների և աւտո-օմնիբուսների ոռնոցը, կառապանների զգուշացնող գոչերը հիւսւում էին միմեանց ու հնչւում, որպէս մի ազդարարող քայլերգ աղմկող ու եռուն քաղաքի:

Այդ անիւսաւոր շարժման ափերին, հաստակուու ու բարձրաբերձ շէնքերի երկայնութեամբ, խռնւում էին մարդկային հուժեկու հոսանքներ: Կարծես փողոցի ծայրին մի անհատահոս աղբիւր՝ բղխում էր այդ շարժուն ու գորշ զանգւածը, որ ոչ վերջ պիտի ունենայ և ոչ էլ ծայր:

Եւ Ռուստոմեանին թւաց, որ դրանցից իւրաքանչիւրը փողոց է դուրս եկել մի ան-

հրաժեշտ, մի անյետաձգելի գործով։ Ոմանք մտազբաղ են և լուրջ՝ նախապայմանը մի կարևոր գործողութեան, միւսները ինքնաբաւական ու ժպտուն՝ գրաւականը նրա յաջող ելքի։ Բոլորի, բոլորի կեանքն ունի իր պարունակութիւնը։ Բոլորը մի որ և է բան են անում։ Միայն իր կեանքն է, որ դատարկ է ու անպարունակ…

Ո՞վ է նա և ինչի՞ համար է ապրում…

Ու նա երանի տւեց այն փոքրիկ մանուկին, որ ճեմուկներում մանուշակ էր վաճառում. այն լրջմիտ պատանուն, որ անկիւնատան առաջ լրազբներ էր ծախում, այն խստադէմ կառապանին, որ իր յոզնած ձիու սանձերն էր շարժում, այն կորազլուխ ալեսրին, որ փողոցի աղբն էր կուտակում։ Նրանցից իւրաքանչիւրը գոնէ մի բան է անում, մի գործ է կատարում և ամեն օր արթնանում է՝ հաստատ իմանալով, թէ ինչ է սպասում նրան վաղը, ամեն օր քնում է՝ գիտակցելով, թէ արաւ այն, ինչ պիտի անէր այսօր։ Երանի էր տալիս նրանց, որովհետեւ նրանցից իւրաքանչիւրը կեանքի մի նեղ փողոցն էր գնում՝ գաղափար անգամ չունենալով այն մեծ հրապարակի մասին,

որտեղից բոլոր նեղիկ փողոցներն են երեւում և ուր, իրար դէմ ու դէմ, կեանքի երկու առեղծւածներն են բարձրանում՝ փառքի տաճարն ու լերկ կախաղանը…

Վայ նրան, ով ոչ առաջնի մէջն է, ոչ երկրորդի վրայ և ոչ էլ այդ նեղիկ փողոցներից մէկում…

Ու կրկին, որպէս մուրճի երկու հարւածներ, զարնւեցին Ռոստոմեանի ուղեղում երկու հարցերը՝ ով է նա, ինչի՞ համար է ապրում։

Այդ ըսպէին էր, երբ իր կողքին լսեց կանացի մի հմայիչ ձայն, քնքոյշ ու կորովալի արտասանութեամբ։

— Ինչու այսպէս մտազբաղ ես, սիրելիս։

Անկեղծ էր այդ դիմումը, թէ դիտաւորեալ՝ նա չկարողացաւ տարբերել. այսքանն իմացաւ, որ դիւրեկան էր։

Նա զգաց կանացի փափուկ կրծքի հպումը իր թեկին, լսեց կրկին նոյն ձայնը.

— Մարդու ես սպասում, թէ որևէ տեղ պիտի գնաս։

Ռոստոմեանը լուռ գլուխը շարժեց։

— Դէհ, որ այդպէս է, վեր, հոգիս, գնանք ինձ հետ։

Հիպնոսւածի պէս՝ նա վեր կացաւ տեղից
ու շարժւեց:

— Գնանք ինձ հետ. եթէ որ և է վիշտ պատել է սիրտդ՝ կփարատեմ. եթէ որ և է որդ կրծում է խիղճդ՝ կմահացնեմ. եթէ տխուր ես՝ կուրախացնեմ. եթէ վառում ես կարօտով՝ կառնեմ կարօտդ. արի ինձ հետ և դու անհոգ ու երջանիկ կլինես...

Կարծես՝ մի սքանչախօս առւակ, մարդագետնում հոսող, հրապուրսւմ էր նրա լսողութիւնը իր կոհակների գեղ հնչիւններով...

— Անհոգ ու երջանիկ կլինես...

Նա սեղմւեց կնոջ թեկն:

— Ասա, սիրելիս, այդ լոնչ ես ափիդ մէջ այդպէս ամուր պահել, — հեղ ժպտով հարց տւեց կինը:

Ռոստոմեանը փոքրիկ երեխայի հրձւանքով բացեց ափն ու ցոյց տւեց ոսկի դրամները:

Կինը ինդալից քրքջաց, փաթաթւեց նրա թեխն ու, գլուխը դէպի ուսը թեքելով, շշնջաց.

— Որքան ցանկալի ես, mon cheri, mon petit zizi-koko!..

Նրանք անցան հարևան փողոցն ու մտան մի հիւրանոց:

Օրը մօտենում էր իր վախճանին:

Մութը կամաց-կամաց իջնում էր մեծ պրոսպէկտի վրայ ու բարձրանում նրա հարևան, խորը ջրաղացների նմանւող, փողոցներում։ Բազմախուռը խանութների առաջ թարթելով վառեցին խոշոր էլեկտրական լուսագնդերը։ Փողոցների ճեմուկների երկայնութեամբ, մի գոյգ ոսկի շղթաների պէս, ձգւեցին քաղաքային լապտերները։ Լեռնակոյտերի պէս միմեանց դէմ ու դէմ բարձրացող աների մէջ երևացին ճրագներ, և անհամար պատուհանները իրենց լուսաւոր աչքերը միմեանց չուեցին...

Մեծ քաղաքի համար սկսւեց մի նոր օր, նոյնքան երկարատև և նոյնքան բազմաբովանդակ, որքան նորավախճան ցերեկօրը...

VI

... Անհոգ ու երջանիկ կլինես...

Հէնց ինքն ամբողջովին անհոգութեան ու երջանկութեան տիպարն էր։

Ինքնաբաւական ու անփոյթ՝ փուել էր հսամաշ բազկաթոռի վրայ, և շրջազգեստի տակից բացւում էին միմեանց վրայ դարսած հոլանի սրունքները։ Բաճկոնակի կի-

սաբաց լանջկալից փողվողում էր նրա մարմարեայ կուրծքը, որ համաշափ բարձր ու ցածր էր լինում: Զեռքին բոնած ծխախոտից ծուխը բարձրանում էր դէպի առաստաղը, լուծում այնտեղ էժանանոց անուշահոտութեան հետ և նորից իջնում դէպի ներքե ու ճնշում սենեակի մթնոլորտը:

Իսկ Ռոստոմեանը տխուր ու մտազբաղ էր: Նա, արմունկը սեղանին յենած, նայում էր գինու ու գարեջրի դատարկ շիշերին, որոնք սփոռցի ծայրերից լուռ հսկում էին թափթփւած ափսէներն ու կերակուրների սառած մնացորդները:

Տիրող լոռութիւնը խախտեց կինը՝ դիմելով Ռոստոմեանին:

— Նորից քիթդ կախեցի՞ր. տեսնում ես, քեզ համար երգեցի, սլարեցի. էլի՞ տրամադրութիւնդ չբացւեց: Գուցէ աւելի ձանձրացնում եմ. հը՞, ասա, ի՞նչ ես մտածում:

Ու, ցատկելով տեղից, մօռեցաւ Ռոստոմեանին, մի ծունկը դրեց նրա ծնկանը, ձեռքով փաղաքշեց գլուխն և, մատները սուզեցի նրա խիտ մազերի մէջ, երկու սկ աչքերը յառեց նրա աչքերին:

— Ե՞ս, ես ոչինչ չեմ մտածում, սիրելի Ժանէտ, — պատասխանեց Ռոստոմեանը. — Ես ինչի՞ մասին պիտի մտածեմ. դու երգիր, պարիր. կուզես ասեմ, որ շանպայն էլ բերեն, թքած, թէ ինչ կլինի էգուց:

— Սուտ ես ասում. դու մտածում ես. մի ինչ որ բան կրծում է քո սիրտը. ասա, պատմիր ինձ քո դարդը:

Ու նոյն դիրքով՝ կինը պահանջկոտ հայեացքը չհեռացըրեց Ռոստոմեանից:

Այդ հայեացքի մէջ յանկարծ Ռոստոմեանը կարդաց մի տարօրինակ, կաշկանդիչ մտերմութիւն, որ վաղուց գոյութիւն չունէր նրա համար: Նրան թւաց, — չգիտէր ինչնու, — թէ այդ կինն է իր որոնածը, որ պիտի իրեն լսի, հասկանայ ու միսիթարի: Նա ցընցւեց այդ մտքից ու բռնւեց մի անզուսալ ցանկութեամբ՝ խօսելու, պատմելու:

Մինչ նա սկսում էր՝ կինը կանխեց.

— Ասա, ինդրեմ, ինչ է քո արհեստը:

— Ես... ես ոչ մի արհեստ չունիմ, — պատասխանեց Ռոստոմեանը ոչ խկոյն:

— Իսկ առաջ այնտեղ, Ռուսաստանում, ինչնո՞վ էիր զբաղւած:

— Կըկին ոչնչով:

Կինը հարցական շարժեց գլուխը:
— Այստեղ սոցիալիստ էի, —դուքս թռաւ
Ռուստոմեանի բերանից՝ կրծքից բղխող հա-
ռաչի հետ:

Կինը ցնցւեց, որպէս էլեկտրական տոկից,
ու մի քայլ յետ քաշւեց:

— Անարխիստ, տերրորիստ, մարդա-
սպան...

— Ոչ, ժանէտ, ոչ. սոցիալիստ, ինչպէս
ձեր երկրի սոցիալիստները, որոնք կուռում
են բանւորների ու մարդկութեան բարօրու-
թեան համար:

— Ես չեմ սիրում սոցիալիստներին, —
պատասխանեց կինը. — Դրանք շատ տարօրի-
նակ մարդիկ են. Նախ ամենքն էլ աղքատ
են, երկրորդ՝ ամեն բանից դժգոհ, միշտ
տրտնջող:

Ռուստոմեանը ոտքի կանգնեց ու, կուճքն
ուղղելով, բացականչեց.

— Բայց մենք չենք բաւականացել լոկ
արտունջներով, հասկանում ես. մենք բողո-
քել ենք, կուել. մենք արիւն ենք թափել ու
յաղթանակներ տարել...

— Եւ յետոյ յաղթւել, —ընդմիջեց կինը
քմծիծաղով. — Դու կարծում ես՝ մենք չգի-

տէնք. մենք լրագրներ չենք կարդում. այս,
բոլորդ, բոլորդ էլ յաղթւել էք:

Մի սարսուռ անցաւ Ռուստոմեանի կրունկ-
ներից մինչև մազերի ծայրը: Կարծես՝ մի կուժ
սառը ջուր շուռ տւին վրան: Կնոջ խօսքերը
հնչեցին՝ որպէս մահւան դատավճիռ: Նա նըս-
տեց սեղանի առաջ, գլուխն առաւ երկու ա-
փերի մէջ ու լոեց: Թւում էր, որ սենեակի
բոլոր առարկաները, լեզու առած, որպէս ան-
թիւ գրամմօֆօններ, կրկնում էին.

— Բոլորդ, բոլորդ էլ յաղթւած էք...

Կինը վեր կացաւ տեղից, ծոյլ ու անտա-
բեր, չքաշւելով օտարիներկայութիւնից, հան-
ւեց ու անկողին մտաւ:

— Ժանէտ, — կանչեց աղերսող ձայնով
Ռուստոմեանն ու չոքեց մահճակալի առաջ. —
Ես եմ յաղթւել, շատերն են յաղթւել, բայց ոչ
բոլորը, հասկանում ես, ոչ բոլորը, այլ ես...

Ու դողդոջուն, խորհրդաւոր շշուկով շա-
րունակեց.

— Իսկ նրանք, իմ ընկերները, երբէք չեն
յաղթւել: Օ՛, նրանք երբէք չեն յաղթւի...
Նրանք ուժեղ են և կամակոր... Դու կար-
ծում ես, ես նըանց գրած նամակի իմաստը
չհասկացայ: «Կուսակցութիւնն այլևս ան-

կարող է»... Ո՞չ, սուտ է. նրանք ինձանից երես են շուռ տւել. նրանք իմ գոյութեան վրայ խաչ են դրել, որովհետև ժընկ եղած ժամանակս ինձ ճանաչել են... Օ՛, ես ատում եմ նրանց...

Զայնը դողաց ու խզեց: Իր խօսքերի ծանրութեան տակ նա այլայլած՝ ոտքի կանգնեց:

Կինը քնէած ճռոցով շարժւեց վերմակի տակ ու երեսը դէպի պատը շրջեց:

Տիրեց մի կարճատև լրութիւն, որից յետոյ կրկին լսւեց Ռոստոմեանի ճայնը: Բայց այս անգամ նա բղխում էր կրծքի խորքից ու հնչւում այնքան խուլ. կարծես՝ նա այնտեղ իր խղճի հետ էր զրուցում:

— Ո՞չ, ես նրանց չեմ ատում. ես իրաւունք չունիմ նրանց ատելու: Նրանք գործել, աշխատել են: Աշխատել են գիտակցաբար, երկաթէ համոզումներով... Իսկ ես... ես երբէք նրանց հաւատը չեմ ունեցել դէպի գործը, յաղթանակը: Ես գործել, ես միայն ճառել եմ այնքան ժամանակ, որչափ բոլորն էին գործում, որչափ ինձ ծափահարում էին. ես բաւականութիւն էի զգում, և ինձ չէին հալածում... Այժմ այլիս ան-

կարող եմ... ես ձանձրացել եմ: Բանւորը, մարդկային ազատութեան գաղափարը ինձ չեն գրաւում, ինձ ոչ մի բան չի հետաքրրքը ում, հասկանում ես, ոչ մի բան...

Նա նորից մօտեցաւ մահճակալին, նստեց անկողնու վրայ ու, դէպի կինը կուանալով, ասաց.

— Տեսնում ես, ժանէտ, ես քեզանից ոչինչ չեմ թագցնում. գուցէ՝ դու կարծես, որ ես զառանցում եմ գինու ազդեցութեան տակ: Ո՞չ, ժանէտ, ես ուզում եմ այսօր անկեղծ լինել, ես ուզում եմ խօսել, որովհետեւ դա ինձ բաւականութիւն է պատճառում, ես թեթեանում եմ... Բաւական է, որչափ կեղծեցի. ես այլիս սոցիալիստ չեմ, այլիս... Բայց դու չես զարմանում, ժանէտ, դու չես պատասխանում. միթէ դու չէիր լսում. ժանէտ, դու քնած ես...

Նա իստերիկօրէն առաւ կնոջ գլուխը ձեռքերի մէջ և դէպի իրեն շրջեց ստուգելու համար: Կինը քնաթաթախ աչքերը խոժուեց ու աղաղակեց.

— Որքան կոպիտ էք, պարոն, դուք ի՞նչ իրաւունքով քնած տեղս այդպէս վախեցնում էք:

— Ժանէտ, ինչպէս կարող ես քնել, եթէ
իմ սիրաը յատակն ի վեր շուռ տւի առա-
ջիդ: Ժանէտ, անգնւթ; անխիղճ, ես կար-
ծեցի...

— Շատ հարկաւոր է՝ նստեմ ու քո հե-
քիաթները լսեմ. անգութը և անխիղճը դժւ-
ես. ողջ օրը թափառել եմ փողոցները, ուս-
ներս մըմոռում են, թոյլ չես տայ մի փոքր
հանգիստ առնեմ. տւածդ փողը ինչ է...

Մի ըոպէ ողջ սենեակը մթնեց ու շուռ
եկաւ նրա զլխին: Յատակը օրօրւեց ու սա-
հեց նրա ոտների տակ, և նա շշմած՝ աթո-
ռին ընկաւ, փակեց աչքերը:

Նրան թւաց, թէ ինչպէս սենեակի առաս-
տաղը, որպէս դագաղի կափարիչ, շարժւեց
տեղից ու մեծ աղմուկով յետ գնաց: Մու-
թը բացւածքից ներս սողացին ճիւղաձև
սուերներ, որոնք, սուր ճանկերը միմեանց
ձուլելով ու նօսր պոչերը սպառնօրէն թա-
փահարելով, օղակ կազմեցին նրա զլխավե-
րեր: Դիւային լկոի ծիծաղի ու խելագար
քրքիջների ներդաշնակութեամբ նրանք պար
բոլորեցին օդի մէջ:

Մարդկային զլուխներ ունէին դրանք:
Եւ Ռոստոմեանը մահւան սարսուռով ճա-

նաչեց բոլորին: Նրա առաջ պատկերացան
իր տիրուհու, ոստիկանութեան ագենտի, իր
մատնիչ ընկերոջ, ծնողների, անհամար բան-
ւորների, ոստիկանների ու կազակների դէմ-
քերը՝ սպիտակ ու բաց երկշար ատամնե-
րով...

Նա խելակորոյս ոտքի կանգնեց ու բա-
ցեց աչքերը:

Վայրկենապէս բոլորը չքացան՝ թողնելով
միայն մահճակալի վրայ պառկած կնոջ, որ
հեզ ու անդորր ննջում էր...

Նրա վրայից վերմակը մի կողմ էր սա-
հել ու բացել կիսով չափ մարմինը: Հազի
շապիկը մանգաղի կորութեամբ հպւում էր
նրա մարմարեայ կրծքին ու իր բարակ ծալ-
քերի մէջ հազիւ սքողում կանացի իրանի
գողտըիկ ուրւագծերը: Արեան մի քնքոյշ
զարկերակ, մեղմ ու ննազանդ, բարախում
էր նրա ճիւնսնման պարանոցի վրայ, ծնօ-
տի տակը:

Մի ըոպէ Ռոստոմեանը չուղեց, որ այդ
երակը բաբախի, չուզեց, որ այդ կինը հեզ
և անդորր ննջի: Մի խելագար միտք պա-
տեց նրա ուղեղը, և նա կամեցաւ այդ ճիւ-
նսնման պարանոցը երկու ափերի մէջ առ-

նել ու երկու բութ մատների հաստ եղունգն
ներով այդ բարախող զարկերակը սեղմել...
...Ու փակեց աչքերը:

Առաստաղը նորից, որպէս դագաղի կա-
փարիչ, շարժւեց ու մեծ շառաչիւնով վեր
բարձրացաւ: Լուեցին նոյն քրքիջներն ու
դիւային լկտի ծիծաղը... Մի տաք արիւն
հաճելի գրգիռով շրջանառեց նրա երակների
մէջ: Նա հոհոաց դիւային նոյն քրքիջով...
ու բութ մատների հաստ եղունգները սեղ-
մեց փափուկ պարանոցին...

Կինը յուսահատ թաւալում էր տաք ան-
կողնու մէջ...

Մոսկով, 1909

ՍԱՔՈՒԼԻ ԽՈՒՄԲԸ

Խումբը բաղկացած էր չորս հոգուց, կամ,
ինչպէս Սաքուլն էր ասում՝ չորս «լօթինե-
րից»: «Խումբապետը», — նոյն Սաքուլի ար-
տասանութեամբ, — էր հէնց ինքը, Սաքուլը:
Այդ «լօթիներից» երկուսը արական սեռին
էին պատկանում և կոչւում էին՝ Սաքուլ ու
Գիքուլ, իսկ միւս երկուսը իդական սեռից
էին և ընդհանուր առումով կոչւում էին
«Կէկէներ». մէկը՝ Սաքուլի Կէկէլը, իսկ
միւսը՝ Գիքուլի Կէկէլը...

Մի օր, գարնանը, բնագիտական ֆակուլ-
տէտի ուսանողը դարձաւ իր ընկերներին, —
որոնք երեկոյեան դէմ, զբաղմունքից յետոյ,
քաղաքային այգին էին դուրս եկել հան-
գըստանալու, — ու ասաց.

— Ընկերներ, ինչ ուզում էք, ասէք,
այսօր որոշել եմ անպատճառ հարբել. իսկն
եմ ասում՝ սա նամուս չէ. մարդ այսքան

տարի ապրի Գերմանիայում և ոչ մի անգամ գարեջրով չհարթի։ Ի՞նչ կասեն լսողները։ Մի տեսէք՝ ի՞նչ են անում կորպորանտներն ու բուրշենշաֆտէրները, ամեն օր քէֆ, ամեն օր կոնժարսնութիւն։ Եւ նրանք էլ են ուսանող, մենք էլ, հա։ Ճիշտն եմ ասում, ոսա ազգային խայտառակչութիւն է։ Ի՞նչ էլ ուզում է լինի՝ այսօր պիտի գնանք մի ռեսառան և գարեջրով հարթենք։ Պէտք է այնքան խմենք, մինչև որ գերմանացի ուսանող տեսած ժամանակը երգենք՝ Deutschland, Deutschland, über alles»..

Բնագէտ ուսանողի տրամադրութիւնը լուրջ էր ու վարակիչ, որի առաջ շուտով բոլորն էլ տեղի տւին։

Նրանք դուրս եկան համալսարանական փոքրիկ քաղաքի սահմաններից, բարձրացան դիմացի բլրակն ու մտան մի գեղանիստ ռեսառան, որտեղ ուսանողներ շատ էին յաճախում։

— Herr Ober, Bier, bitte Bier,—գոչեցին նրանք ամեն կողմից՝ մի փոքրիկ սեղան գրաւելով։

Զորս հոգի էին դրանք։ Երկուսը ուսանողներ՝ բնագիտական և իրաւաբանական

ֆակուլտէտից, իսկ միւս երկուոր ուսանողուհիներ էին, որոնք մանկավարժութիւն էին ուսումնասիրում։

Երկար չտևեց, ու նրանք բաց արին հանաքների ու ծիծաղի տոսքրակը։

Բնագէտ ուսանողը, որ արդէն իրեն գարեջրից տրամադրւած էր համարում, վեր կացաւ տեղից ու դերասանական մի ժէստով դիմեց ընկերներին։

— Collegen! թոյլ աւէք հիմա մի հարբած թիֆլիզեցի կինտօյի ձևն անեմ։

— Հոգեբանութեան մէջ դա կոչւում է ասոցիացիա, — վրայ բերեց իրաւաբան ուսանողը ընդհանուր հոհոցի տակ։

Մի ըոպէ նրանք լուցին ու լարեցին իրենց ուշադրութիւնը։ Նրանք լաւ գիտէին, թէ ինչպիսի հմտութեամբ էր նա իր պրոֆեսորների ու ծանօթ մարդկանց ձեւերն անում։

Բնագէտ ուսանողը սկսեց։

— Կինտօն, որին ես պիտի պատկերացնեմ, կոչւում է Սաքուլ։ Մի օր դա իր ընկեր Գիքուլի հետ Օրթաճալայի այգիներից մէկում գունով քէֆ էր արել և երեկոյեան անչափ գործածած ալկոհոլի հետե-

ւանքից էր տուժում։ Սակայն՝ իր այդ մեղ-
քի միակ պատճառը նա Գիքուլի վրայ էր
ձգում ու անդադար մեղադրում։ «Ճօ, Գի-
քնուլ, ասում եմ, էդ գինին վուր տալիս իս՝
քացիս... ուախք... քացիսիլ է. չէ, կօսէ,
խմի՛, Սաքնուլ, կօսէ, կախէթու գինի է, կօ-
սէ, այ, գիախ, էս էլ քեզ... ուախք... կա-
խէթու գինի»...

— Բրաւօ, կեցցէ, — բացականչեցին ուն-
կողիները՝ ծիծաղից թուլացած։

Իմիտացիան շատ յաջող էր։

— Կարծես՝ իսկապէս հարբած լինէք, —
ասացին ուսանողուհիները։

— Իսկ և իսկ Սաքուլ, — վրայ բերեց ի-
րաւաբան ուսանողը. — արի՞ հէնց քո անուն
էլ Սաքուլ դնենք։

— Այն ժամանակ քեզ էլ պիտի Գիքուլ
կանչենք, որովհետև Սաքուլի ընկերը Գի-
քուլն էր։

— Համաձայն ենք, համաձայն ենք, —
ծափահարեցին ուսանողուհիները։

Եւ այդպէս նրանց անունները մնացին՝

— Սաքնուլ, Գիքնուլ։

Այդ օրը նրանք շատ ծիծաղեցին, շատ
հանաքներ արին, բայց, վերջի վերջոյ, նրան-

ցից ոչ ոք չհարբեց, որովհետև երկրորդ բա-
ժակից յետոյ ոչ ոք այլ ևս գարեջուրը շըր-
թունքին մօտեցնել չկարողացաւ։

Սակայն՝ այդ գարեջրային քէֆն այն հե-
տևանքն ունեցաւ, որ այդ չորսը մտերմու-
թեան մի ամուր օղակով շաղկապւեցին։

Այդ օրւանից նրանք միշտ միասին էին
զբոսանքի ենում, ազատ ժամերին միմեանց
հետ լինում, միասին ժամանակ անց կաց-
նում։

Անմեղ ու անկանխակալ էին նրանց յա-
րաբերութիւնները՝ ընկերական պարզ և ա-
նաղարտ բնոյթ կը ողի։

Եւ թւում էր, թէ այդպէս էլ պիտի լի-
նէր։

Գիքուլն արդէն նշանւած էր, ուսանողու-
հիներից մէկը դեռ նոր պսակւած։ Միւսը
օրիորդ էր, Գիքուլի հարազատ քոյրը։ Իսկ
Սաքուլը Գիքուլի վաղեմի ընկերն էր և նոյն
ընկերական վերաբերմունքը ցոյց էր տալիս
և դէպի նրա քոյրը։

Անրոնազրօսիկ էին և նրանց հանգիպում-
ները։

Ամեն անգամ Գիքնուլի քոյրը իր ընկե-
րուհու հետ անցնում էր եղբօր մօտ ու ե-

րեքը միասին դուրս էին գալիս զբօսնելու։
Նրանց աննկատելի կերպով միանում էր և
Սաքուլը, որին յաճախ Գիքուն էր հրաւիրում։

Սակայն՝ երբ այդ չորսը զբօսնքի էին
ենում կամ նաւարկելու դէպքում երկու
նաւ ընտրում՝ ինքնաբերաբար, միանգամայն
բնական կերպով, նրանք երկու զոյգի բա-
ժանւելիս՝ Գիքուլը գնում էր տիկնոջ հետ,
իսկ Սաքուլը՝ օրիորդի։

— Սաքուլ, — կանչեց մի օր Գիքուլը, —
մենք մեր անուններն ունինք, հարկաւոր է,
որ մեր զոյգերն էլ մեզ համապատասխան
իրենց անուններն ունենան։

— Լաւ, Գիքուլ ջան, ի՞նչ եմ ասել, արի
սրանց անուններն էլ «Կէկէներ» դնենք։

— Չենք ուզում, չենք ուզում, — բացա-
կանչեցին մանկական կամակորութեամբ ու-
սանողուհիները, — դրանից արդէն Հաւլաբա-
րի հոտ է փչում։

— Վահ, ուփրօ լաւ, — վրայ բերեց Սա-
քուլը Թիֆլիսի բարբառով. — մինք հաւլա-
բարցի ենք ու Հաւլաբարի լայեղ անուն էլ
պիտի ունենանք։ Իփ որ Սօլօլակ կու ապ-
րինք, էն ժուկը ձիզմէ մէկին ժենեա կու
կանչինք ու էն մէկէլին՝ Մանեա։

Այս խօսքերին հետևող միահամուռ ծի-
ղաղը, այսպէս ասած, սանկցիա տւեց այդ
նոր անւանակոչութեանն էլ։

Տիկինը դարձաւ Գիքուլի Կէկէլը, իսկ օ-
րիորդը՝ Սաքուլի Կէկէլը։

Ու այսպէս կազմւեց խումբը։

Եւ որովհետև խմբի մէջ Սաքուլը միշտ
նախաձեռնող էր և ամենից ծանօթը տեղա-
կան պայմաններին ու լեզւին՝ խումբն էլ
կոչւեց նրա անունով։

— Սաքուլի խումբ։

* * *

Ուսանողութեան երանելի օրեր, դուք,
որ հոգս ու միտք չէք ճանաչում և ամե-
նասրտաբուղս յուշերով էք արձանանում
անցեալի մէջ, դուք անմոռաց կը մնաք...

Ողջ օրը մի առւղիտորիայից՝ միւսը, լա-
բարատորիայից՝ գրադարան, գրադարանից՝
տուն քարշ գալուց յետոյ, անկասկած, շա-
բաթւայ մէջ երկու-երեք անգամ տեղի ու-
նեցող հանդիպումները թարմութեան ու աշ-
խոյժի նեկտար էին սրսկում Սաքուլի խմբի
անդամների ուղեղներն ու ջղերը։

Նրանք պարապմունքի ժամերին մոռա-

նում էին միմեանց և միմեանց հետ եղած ժամանակը մոռանում պարապմունքի տաղագուկ ժամերը:

Հանդիպելիս նախ և առաջ միմեանց հաղորդում էին օրւայ տպաւորութիւնները, որոնք, ըստ մեծի մասին, դասախոսութիւններին էին վերաբերում, ապա նրանք անցնում էին փոխադարձ կատակների: Յաճախ Սաքուլը ձեացնում էր հայրենի պատկերներ, ուր երևան էին գալիս և սրամիտ թիֆլիզեցին, և կոպիտ դարաբաղցին, և շատախօս շամախեցին և ժլատ զոկը:

Այդպէս էին անց կացնում նրանք ազատ ժամերը:

Միշտ անհոգ, միշտ ուրախ ու ծիծաղկոտ:

* * *

Կիրակի օր է:

Վաղ ճաշից յետոյ նրանք բաց օդն են դուրս եկել ու մօտակայ անտառապատ բըլրակը բարձրացել:

Սաքուլն ու Գիքուլը իրենց կէկէների համար ծաղիկներ են քաղում, իսկ կէկէները, նստած սիզաւէտ սարալանջին, փնջիկներ են կազմում:

Գիքուլի կէկէլը գոհ է Գիքուլի հաւաքած ծաղիկներից. նա սիրալիր ընդունում է ծաղիկներն ու ամեն անգամ մի քնքոյշ խօսքով և կամ մի ժապուն հայեացքով հատուցանում:

— Կէկէլ ջան, — ասում է մի սանձարձակ քնքութեամբ Գիքուլը. — Եթէ ես ձեր ամուսնու տեղ մի մեղու լինէի, կթոչէի միշտ այն ծաղիկների շուրջը, որ դուք կանկէիք:

Տիկինը չի հականառում, որովհետեւ ուրիշի բերանով իր երջանկութիւնն է խօսում. նա միայն երախտագէտ պատասխանում է.

— Իսկ ես, եթէ ձեր նշանածի տեղը լինէի, այդ ծաղկէ թիւերը այնտեղ կանկէի, ուր ձեր պատուհանը կնայէր...

Եւ նրանք իրար մէջ իրենց սիրածներին են տեմնում ու վաղաքում...

Միանդամայն այլ ընթացք է ստանում Սաքուլի և իր կէկէլի յարաբերութիւնը: Վերջինս միշտ դժգոհ է Սաքուլի բերած ծաղիկներից, որոնց մերթ-մերթ կամակորութեամբ դէն է շպրտում:

— Սաքնւ, սո ինչ ծաղիկ է, — ասում

է օրիորդը վրդովւած՝ ձեռքի ծաղիկը դէն
ձգելով.—որտեղ վաս ծաղիկ կայ՝ այն ես
բերում:

— Վահ, չիս հաւառում, էլ չիմ բերի,
խստասիրտ վրայ է բերում Սաքուլլ Թիգ-
լիդի բարբառով:

— Հա, ես էլ էն չախը քու Կէկէլը չիմ
ըսի:

— Աղանջանք չիմ անում. չիս ուզում՝
մարախաստ կու տամ. վահ, քիզմէն ուփրօ
նամուսովը կու ճարիմ:

Նրանք ընդհարւում են ու վերջը՝ խռո-
վում: Սկսւում է մի համը կոփւ՝ միմեանց
ենթարկելու համար. սակայն՝ ոչ մէկը չի
ուզում առաջինը զիշել:

Բայց երբ, մի փոքր անց, Գիքուլը ինչ
որ բանի համար նեղանում է քրոջ վրայ,
Սաքուլլ ինքնաբերաբար միջամտում է.

— Ե, պարուն Գիքնէլ, խուսքդ ճանչըդի
ու տիղդ նստի. դուն իմ Կէկէլի վրայ ի-
րաւունք մի բանացնի:

— Ի զուր ես դու, Սաքնէլ, մէջտեղ
ընկնում, քո Կէկէլը քո կարիքը չի զգում,
նա քեզ ապահարզան է տւել,—նեղն է դը-
ցում Գիքուլը Սաքուլին:

Գիքուլի Կէկէլը յաղթական ծիծաղում է:
Բայց չի համբերում Սաքուլի Կէկէլը և
հեղնանքով միջամտում է.

— Երանի՛ ձեզ, որ ձեր շէմքից մեղր ու
կարագ է հոսում. մենք կկուենք էլ, կբա-
րիշենք էլ. մեր գլխի աէրը ով է. արի՛, Սա-
քուլ ջան, դրանց թայը մի՛ լինի, արի բա-
րիշենք:

Ու, ցատկելով տեղից, փաթաթւում է Սա-
քուլի կոնին:

Նորից ծիծաղ, նորից կատակներ:

Նրանք, վերջապէս, աւարտում են իրենց
փնջիկներն ու անցնում անտառի խորքը: Այնտեղ, ծառակամար շաւիղներում, նրանք
վազվում են, երգում, գոչում, ծիծաղում,
անմեղ չարաճճիութիւններ անում:

Օրը մթնում է, և նրանք, յոգնած ու ծա-
րաւ, համնում են բլբակի միւս երեսին, գե-
ղեցիկ գիրքի վրայ գտնուղ գարեջրատունը: Այդ այն գարեջրատունն էր, ուր նրանք ա-
ռաջին անգամ հաւաքւեցին հարբելու ու
չկարողացան:

Այնտեղից գէպի հովիտը բացւում էր մի
դիւթական տեսարան:

Մութը, իջնելով սարերից, շղարշել էր ու

անտառները, կուտակւել հովիակ մէջ ու կոտար տւել համալսարանտկան փոքրիկ քաղաքի վրայ: Նա, կախւելով վերեկից, լիզել ու չնչել էր եկեղեցիների վերաոլոց գմբէթները, աների բարձր կտուրներն ու վէս աշտարակները:

Ներքե փայլվլում էին անհամար ճրագներ, որոնք մերթ ձգւում էին, որպէս ոսկէ զոյդ մանեակներ, ու մերթ դարսւում միմեանց վրայ, ինչպէս լուսեղէն քառակուսիներ:

Փչում է զով զեփիւոը ու շոյում չորսի տաք ճակատները:

Նրանք լուռ են ու ծանրաբեռնւած ինչ որ խոհերով: Կատակելու այն տրամադրութիւնը, որ տիրում էր զբօսանքի սկզբին, միանգամայն բացակայում է:

Սպասաւորը բերում է չորս բաժակ գարեջուր ու դնում առաջները:

— Տիկին, — ասում է մի անսովոր լրջութեամբ Գիքուն ու բարձրացնում իր բաժակը, — ձեր կենացը:

Եւ մի փոքր յետոյ աւելացնում.

— Զեր սիրածի կենացն էլ:

— Զեր սիրածի ու ձեր կենացը, — պա-

տասխանում է մի առանձին շեշտադրութեամբ տիկինն ու բաժակը շրխկացնում:

Սաքուլը, յետ չմնալու համար իր ընկերից, բաժակն իր զուգակցին է ուղղում ու մերքենաբար, կէս-հանաքով առաջարկում.

Կէկէլ ջան, էս էլ միր կենացը:

Օրիորդը պատասխանում է: Բայց երկուսն էլ յանկարծ շփոթւում են ու կարմրում: Ու երկար ժամանակ, չգիտեն ինչու, աշխատում են հայեացքներով միմեանց չհանգիպել:

Նորից նրանք լուռմ են, նորից սուզւում մտախոհութեան մէջ:

Կէս-զիշերի մօտերը նրանք վեր են կենում ու գէպի քաղաք ճանապարհուում:

Վաղը, առաւօտեան, ամենքն էլ համալսարան պիտի գնային:

* * *

Օրերն աննկատելի կերպով անցնում էին, և ամառայ սեմեստրը մօտենում էր իր վախճանին:

Շուտով նրանք պիտի ցըւէին ամեն մէկը մի կողմը. Սաքուլն ու Գիքուլը պիտի գնային Ռուսաստան, առաջինը՝ ուռսական հա-

մալսարան մտնելու մտադրութեամբ, երկրորդը՝ իր նշանածի հետ պսակւելու համար: Տիկինը պիտի գնար վիեննա՝ իր ուսանող ամուսնու մօս, իսկ օրիորդը՝ Շւէյցարիա՝ իր քրոջ հետ ճանապարհորդելու: Իւրաքանչիւրը ապագայի նկատմամբ տարբեր ծրագիր ունէր, և յայտնի չէր, թէ մէկ էլ նրանք այդպէս կհամոզիսկին, թէ ոչ:

Մօտալուտ հրաժեշտը համակել էր նրանց մի անբացատըելի թախիծով: Եւ որքան մօտենում էր այդ օրը, այնքան զգալի կերպով չէղոքանում էին նախկին պարզութիւնն ու նախութիւնը և կրծատում կատակն ու ծիծառը, որոնք սկզբում նրանց հանդիպման առանցքն էին կազմում:

Վերջին շաբաթն էր:

Այդ օրը նրանք համախմբւած էին գետափին: Արդէն ուշ էր. հեռու գնալ չէին կարող ու որոշեցին երկու նաւակ վերցնել թիավարելու համար:

Ամառային տաք, աստղալից գիշեր էր: Համալսարանական փոքրիկ քաղաքն արդէն քուն էր մտել: Շուրջը լուռ էր: Հեռուից մենակեաց ծառերի ու հասափոր թփերի միջից, ինչպէս մի սնդիկի ծով, ծանր ու

անալիք գետակն էր փուռում, որի վրայ սահում էին Սաքուլի և Գիքուլի նաւակները:

Երկու նաւակներում էլ տիրում է մի խորհրդաւոր լոռութիւն:

— Ուրեմն՝ ձեր որոշումն անշեղ է. հինգշաբթի օրն անպատճառ պիտի մեկնիք, — առաջինը խօսում է տիկինը:

— Այն, — պատասխանում է Գիքուլը՝ հազիւ զսպելով իր հոգուց բղխող հառաչանքը, ու կրկին լոռում: Նա այդ օրը և առհասարակ վերջին ժամանակները վերին աստիճանի լուակեաց է դառել:

— Գիքուլ, — մի փոքր յետոյ աշխուժօրէն շարունակում է տիկինը: Երկում է, որ նրա մէջ մտքերի մի ամբողջ շարան է անցնում:

— Մի շաբաթ էլ յետաձգէք ձեր մեկնումը, և մենք այստեղից միասին կճանապարհենք, — ես կմնամ Վիեննայում, իսկ դուք կշարունակէք ձեր ճանապարհը: — Ի միջի այլոց՝ Վիեննան էլ կը տեսնէք...

Գիքուլը չի պատասխանում. երկում է, որ նա խոյս է տակիս խօսելուց:

Իսկ տիկինը, կարծես փոշմանած, յետ է վերցնում իր ասածը՝ մեղմ ու ընկճած ձայնով:

— Զէ, Դիքնւլ, զնացէք ձեր ժամանակին. Ես մոռացայ, Ես մոռացայ, որ ձեզ սպասող կայ. մի շաբաթը երկար ժամանակ է. գիտէք՝ ի՞նչ մեծ ժամանակամիջոց է մի շաբաթը սիրող մարդու համար...

Գիքուլը կրկին լուռ է...

Նա, աչքերը դէպի դեալը յառած, տեսնում է ինչպէս նիբնող ալիքները, կախւած իրենց դարկող թիերից, վեր են մագլցում, վշուրփշուրփ լինում ու արծաթախօս հնչիւններով կրկին ցած գլուրում և ձուլում ջրերի հետ...

Միւս նաւակում խօսակցութիւն սկսողը Սաքուն է.

— Ի՞նչ գեղեցիկ է այս դիշերը. ինչքան արամադըութիւն, ինչքան խօսքեր կան աստղերի այս աղօս ցոլքերի մէջ, որոնք այսպէս հեղ օրօրւում են ալիքների կնճիռների վրայ. Ես երբէք, երբէք չեմ մոռանայ այս դիշերը...

Օրիորդն աչքերը յառել է Սաքուլին, սակայն՝ մթութեան մէջ նա չի որոշում նրա դիմագծերը. Նա իր առաջ տեսնում է միայն մի խտացած սուեր, որ մտածում, խօսում ու յուզւում է: Եւ այդ սուերը թւում

է նրան մերթ մտերիմ ու հարազատ, որի հետ նա կապւած է հազարաւոր համոզոյցներով, մերթ հետու ու անմատչելի, ինչպէս երկնքում լողացող ամպը:

Մի փոքր առաջ նշմարում է նա միւս նաւակը, որ կարապի պէս սահում է գետակի վրայ, ու զգում եղբօր թիերի ուժեղ ու համաշափ հարւածները ջրերի կրծքին:

— Ես չեմ մոռանայ առհասարակ և այս սեմեստրը, — Ինչեց կրկին Սաքուլի ձայնը, ինչպէս մի հեռաւոր երաժշտութիւն: — Ի՞նչքան թանգարին յուշեր է կապում նա իր հետ: Անցման այդ անհոգ, այդ ծիծաղկոտ ու երջանիկ օրերը... Դուք կարծում էք՝ ես միշտ այսպէս անհոգ ու երջանիկ եմ եղել: Ո՛չ, ամենավին. դա աւելի շուտ իմ տենչանքըն էր... Ես վաղուց ուզում էի պարիսալքաշել իմ անցեալի և ներկայի մէջ: Կամ վորել մոռացման ու անյիշաչարութեան մի մեծ խրամատ ու լցնել ծիծաղով, կատակներով, անհոգութեամբ... Եւ թւում էք՝ մի այդպիսի խրամատ փորելուց յետոյ միայն կարող եմ փոքր թարմացնել իմ ուղեղն ու ջղերը, նոր ոյժ, նոր եռանդ ստանալ...

Փոքրիկ ընդմիջումից յետոյ նա նորից շարունակեց.

— Եօթը օրից յետոյ մենք հրաժեշտ կտանք միմեանց, և ես կմեկնեմ դէպի Ռուսաստան։ Ի՞նչ է ինձ այստեղ սպասում՝ չգիտեմ։ Ես առհասարակ վերջերս ոչինչ, ոչինչ չգիտեմ... Մի բան միայն ինձ համար պարզ է, որ այս սեմեստրը տաքացրեց իմ կեանքը և շարժեց իմ հոգու մէջ լարեր, որոնք մինչ օրս մեռած էին, մի ինչ որ նւիրական, դիւթող, խորը, խորը... ախ, չգիտեմ ինչ... Ես երբէք, երբէք չեմ մոռանայ...

Նա լոեց ու նոր միայն նկատեց, որ, տարած իր խօսակցութեամբ, բաւականին յետ է մնացել Գիքուլի նաւակից։

Եւ երբ պատրաստում էր ոյժ տալ իր կոնկըին, յանկարծ, մթութեան մէջ արձագանք տւեց մի զուսպ հեկեկանք...

Օրիորդն էր։

Սաքուլի թիերը թոյլ լողացին ջրի երեսին. նա շփոթւած մօտեցաւ օրիորդին ու բոնեց ձեռքը։ Առաջին անգամ նա զգաց այդ ձեռքի տաքութիւնն ու ցնցւեց։

— Ի՞նչու, ինչի՞ համար էր... ի՞նչ պա-

տահեց...— հարցրեց նա կցկառւը և դողացող ձայնով։

Օրիորդը մի փոքր հանգստանալուց յետոյ թաշկինակով շտապ-շտապ սրբեց աչքերը և, կարծես թեթևացած, ժաղիսը դէմքին պատասխանեց։

— Ոչինչ, Սաքուլ, ոչինչ. մի հետաքըրքը բաւուէք... Այս լացը, այս արտասուքները... այնքան երջանիկ եմ...

Սաքուլի սիրաը բարախեց, և մի խուսափող ու դիւթական հաճոյք լողաց նրա երակների մէջ։

Հեռւից լսւեցին թիերի զարկեր, ու Գիքուլի ձայնը կանչեց մթութեան մէջ։

— Տօ, Սաքուլ, էդ ուր մնացիր. Մինի թէ մի բան է պատահել։

Սաքուլի լեզուն կապւած էր։ Նրա տեղ պատասխանեց օրիորդը՝ զւարթ ու հնչուն ձայնով։

— Գալիս ենք, Գիքուլ, գալիս... թփերը խանգարեցին...

Եւ, կռանալով դէպի Սաքուլը, մեղմ ու մտերիմ շշնջաց։

— Նրանց մօտ ոչինչ չասէք, հասկացմք։

Ու զոյգ թիերը նորից դարկւեցին ջրերի
կրծքին, ու զոյգ նաւակները նորից սահեցին
գետակի վրայ...

* * *

Անջատման օրն էր:

Երկաթուղու գնացքը հերձե կայարանին
մօտեցաւ և ահազին ազմուկով կանդ առաւ:
Ճանապարհորդներն իրար անցան, և ամե-
նայարմար տեղի համար սկսւեց մի մըր-
ցում, որ միայն երկաթուղով չճանապարհոր-
դող գիշակերներին է յատուկ:

Սաքուն ու Գիքուլը մի ըոպէ անհետա-
ցան վագոնների մէջ:

— Տես, գնացքն այս ըոպէիս կշարժւի,
և նրանք կմեկնեն առանց մեզ տեսնելու,
— անհանգստացած դիմեց սիկինը օրիորդին:

— Զէ, նրանք, յամենայն դէպս, մեզ ա-
ռանց տեսնելու չեն գնայ, — վրայ բերեց օ-
րիորդը մի անդորր վճռականութեամբ և ա-
ւելացընց՝ ցոյց տալով.

— Այ, տես, գալիս են:

— Էս մեր Դարւինի «Der Kampf ums
Dasein»-ը նոյնիսկ ճանապարհորդների նը-
կատմամբ էլ է ճշտում, — ասաց Սաքուն ու

դիմեց օրիորդին յաղթական ժէստով, — սա-
կայն՝ ուրախ կաց, կէկել ջան, այս կռւի մէջ
էլ գոյութեան իրաւունքը մեզ արտօնւեց.
ամենայարմար տեղերը մենք ենք դրաւել:

— Դէհ, շուտ արա, — սաւնօրէն միջամը-
տեց Գիքուլը, — վիխսովայելու ժամանակ
չէ, Ռուսաստանում չես, ուր գնացքները
ժամերով քնում են:

— Ի՞նչ ես ունքերդ կիաել. քեզանց վա-
խեցող չկայ. դեռ իրաւաբանական պորտ-
ֆէլը կռանդ տակին չէ, — ասաց հանաքով
Սաքուլը:

Գիքուլը մեզմ ու ներողամիտ ժպտաց ու
սկսեց հրաժեշտը: Նա ձեռքը մեկնեց տիկնոջ
և սառն ու անտարբեր — ինչպէս խոռված ըն-
կերներն են հաշտութեան ժամանակ մի-
մեանց ձեռք մեկնում, — սեղմեց նրա ձեռքն
ու հազիւ լսելի ձայնով արտասանեց.

— Մնաք բարե:

Նկատելի էր՝ ինչպէս նա խորն ու զսպած
հառաչեց:

— Մնաք բարե, — կրկնեց Գիքուլը՝ համ-
բուրելով քրոջ հետ:

— Էյ, պարուն աբլակատ, մուլափ տու
ջեր խումբապետը ճառ պիտի ասի, — ասաց

Սաքուլը թիֆլիզի բարբառով ու, հոետորական դիրք ընդունելով, սկսեց.

— Երկու բոպէ ես և մենք կթողնենք այս գեղանիստ քաղաքը, այս սքանչախօս բընութիւնը, նրա նւիրական սարերն ու անտառախիտ բլրակները, ուր Նախախնամութիւնը, Աղամը, Եւան... Մի վախենայ, Գիքուլ, մի, հանաք եմ անում. չկարծես, թէ իսկապէս ճառ պիտի ասեմ: Ճառ չէ, բայց մի խոստովանութիւն անսպատճառ պիտի անեմ: Ի՞նչ թագցնեմ. մենք օտար մարդիկ հօ չենք: Ճիշտ է՝ ձեզ համար դա միանգամայն անսպասելի կթւայ. բայց մըթէ ես սպասում էի. մտքովս անգամ չէր անցնի, ով է կարող իր գլխի գալիքը իմանալ. մարդս որ կայ յաճախ... վերջը՝ ի՞նչ երկարացնեմ. շուտով գնացքը կշարժւի... կարճ և ազդու... իմ գերազնիւ հարևանուհին, որ մինչև այժմ իմ պայմանական կէկէլն էր, այսուհետեւ կլինի իմ իսկական կէկէլը՝ այն միակ պատճառով, որ ես սիրում եմ նրան, և նա՝ ինձ... Ահա մեր կոմունիստական մանիֆէստը...

Օրիորդը, շառագունած, երջանկութեան արցունքները աչքերին, Սաքուլի գիրկն ընկաւ, ու նրանք համբուրեցին միմեանց:

Գիքուլն ու տիկինը, —որոնց համար միանգամայն անսպասելի էր այդ յայտարարութիւնը, —ցնցւեցին այդ տեսարանից և մի լուռ ու վշտախօս հայեացքով միմեանց նայեցին:

— Մնաս բարե, իմ հարազատ, իմ իսկական կէկէլ, —ասաց Սաքուլն օրիորդին ու, յետոյ դիմելով տիկնոջ, տաք և ամուր սեղմեց նրա ձեռքը. —Տիկին, չմոռանաք մեղ. գրեցէք, միշտ ձեղանից տեղեկութիւն տեէք. մնաք բարե՛... Գիքուլ, շտապիր, շւին վչեց:

— Մնաք բարե՛, մնաս բարե՛...

Գնացքը շարժւեց. կայարանն ու մարդիկ կամաց-կամաց յետ նահանջեցին Սաքուլի և Գիքուլի առաջ ու թագնւեցին գնացքին ընդ առաջ վազող ծառերի ու տների յետեւ:

Տիկինն ու օրիորդը, թաշկինակները ձեռքերին, մնացին այնտեղ:

Գնացքը, թեթև և սրբնթաց, ինչպէս մի մարմնացած քամի, սլանում էր երկաթէ շառաւիզների վրայ և ամեն մի ընթացիկ վայրկեանում ծնումնոր հեռաւորութիւններ իր և համալսարանական քաղաքի մէջ:

Սաքուլը, կանգնած պատուհանի առաջ, դէպ հեռու հորիզոնն էր նայում՝ որոնող, բայց երջանիկ աչքերով, իսկ Գիքուլը, դուխն երկու

տպերի մէջ առած, խորասուզւել էր ինչ որ
մտքերի մէջ: Երկուսն էլ լուռ էին՝ սկսած
այն ըռպէից, երբ դնացքը շարժւեց:

Եւ այդ լուռթիւնը նրանք չէին զգացել:

— Գիքնալ ջան,—ասաց Սաքուլը՝ նստելով
ընկերոջ դէմ ու դէմ. այդ ըռպէին նրա
դէմքը փայլեց, և ձայնի մէջ հնչւեցին եր-
ջանկութեան շեշտեր.

— Ո՞վ կարող էր հաւատալ, հը: «Սա-
քուլի խումբը...»: Ինչպիսի անմեղ և անկա-
նախակալ սկիզբ և ինչպիսի անակնկալ և
անսպասելի վախճան... Գիքնալ, ինձ թւում
է, որ սիրոյ մէջ էլ կայ ինդուկտիւ և դե-
գուկտիւ մեթոդներ. ինչ կասես սրան, հը.
այ, օրինակ, ես ինդուկտիւ կերպով սիրեցի:
Մենք նախ ձանաչեցինք միմեանց, յետոյ՝
յարգեցինք և վերջը՝ սիրեցինք: Ես կասեմ,
որ ամենամսախտ սէրը ինդուկտիւ սէրն է...
Գիքնալ, այժմ մենք, բացի ընկերներ լինե-
լուց, աղջականներ էլ ենք, գիտես... Լսիր,
ինչու ես այդպէս լուռ. ինչ կայ, յօնքերդ
էլի կիտել ես:

Սաքուլն առաջին անգամ չէր շեշտում Գի-
քուլի այդ լուռթիւնը: Վերջին շաբաթներս
նա յաճախ նկատել էր, ու Գիքուլի մէջ մի

ինչ որ փոփոխութիւն է կատարւել: Բայց
նա առիթ կամ, աւելի ճիշտն ասած, ժա-
մանակ չէ ունեցել իր ընկերոջ հոգու ներսը
թափանցելու, որովհետև նա ամբողջովին կը-
լանւած էր իր կէկէլով: Այժմ, երբ նրանք
մենակ էին մնացել, նրան աւելի քան տա-
րօրինակ թւաց Գիքուլի տրամադրութիւնը:

— Գիքնալ,—շարունակեց նոյն տոնով Սա-
քուլը՝ ցանկանալով շոյել ընկերոջ նուրբ լա-
րերը.—գիտեմ ինչնւ ես տխուր. որովհետև
մեր խմբից մէկը միշտ դուրս էր մնացել.
այ, նրա մասին ես մտածում. սպասիր. երբ
կովկաս գնանք, ես պաշտօնապէս կներ-
կայանամ նրան, իբրև «Սաքուլի խմբի» խըմ-
բապետ, կտամ մեր «ծրագիրը», ողողա-
գանդ կանեմ և նրան էլ մեր խմբի անդամ
կդարձնեմ... Հիմա հօ ոչինչ չունես...

Գիքուլը արհեստական ու ներողամիտ
ժպտաց:

— Դու քո երջանկութեոն մէջ զառան-
ցում ես, Սաքնալ,—ասաց նա խխտ ու մտա-
խորհուրդ:

— Դու դեռ տես՝ մեր կէկէները ինչ հե-
ռազբներ են ուղարկելու քո հարսանիքին,
— շարունակեց Սաքուլը չարաճճի ժպտաց:

Շատ ի զուր. Նրանք մեծ սխալ կանեն, — ասաց Գիքուլը ու կրկին ժպտաց: Բայց այս անդամ այդ ժպիտը ջղային էր ու յուշ զումնալի:

Սաքուլին այդ ժպիտը դուր չեկաւ, ու նա մի փոքր լուրջ դէմք ընդունեց.

— Ինչու, դու այս տարի չես ամուսնալու:

— Ոչ, — վրայ բերեց խստութեամբ Գիքուլը:

— Հապա ինչու ես կովկաս գնում:

— Ես կովկաս չեմ գնում: Ես ոչ մի տեղ չեմ գնում. հասկանում ես: Ես ճանապարհու կորցրել եմ...

— Ես քեզ չեմ հասկանում, — ասաց Սաքուլը՝ ուսերը վեր քաշելով:

— Շատ բնական է. դու չես կարող հասկանալ. դու կուրացել ես քո երջանկութիւնից, — վրայ բերեց Գիքուլը յանդիմանսական տոնով:

Սաքուլը մի ըոպէ լոեց և ընկերոջ աչքերին նայեց: Նրանց հայեացքները միմեանց հանդիպեցին: Սաքուլը ցնցւեց այդ հայեացքից:

Մի ինչ որ վատ նախազգացում պա-

տեց նրան, ու չարագուշակ հարցը դուրս թռաւ նրա բերանից.

— Գիքուլ, իսկ Զարուհին... չէ որ նա քեզ սիրում է, ասա...

— Դու ինքդ ասացիր, որ ամենաանխախտ սէրը՝ ինդուկտիւ սէրն է... — պատասխանեց Գիքուլը հեգնական և նախկին յանդիմանող տոնով:

Երկուսն էլ լոեցին ու իրենց հայեացքները դէպի պատուհանն ուղղեցին: Այժմ Սաքուլի համար պարզ էր, թէ ինչ վիշտ էր կրծում ընկերոջ սիրուը:

— Գիքուլ, — վաղաքշող ու երերուն ձայնով ասաց Սաքուլը. — Ես գիտեմ. դու քո սիրուը գեռ ևս բաց չես արել նրա առաջ. դու քո վիշտը յատակն ես արել... Գիքուլ, հարկաւոր չէ... հասկանում եմ՝ դժւար է, շատ դժւար: Բայց, բայց... զիտէ՞ն՝ ինչ... մոռացիր, մոռացիր...

Նա, կարծես, զգաց իր խօսքերի անտեղիութիւնն ու լոեց:

Գիքուլը, գեռ ևս հայեացքը պատուհանին յառած, անշարժացել էր տեղումը: Անհուն վիշտն ու ներսը կատարւող փոթորիկը մոռայիցը էին դէմքը: Սաքուլը, երբ լոեց, տե-

սաւ, թէ ինչպէս մի քանի կնճիռներ կըծ-
կւեցին նրա բերանի մօտ, ու արտասուքի
երկու խոշոր կաթիլներ կախւեցին նրա թեր-
թևունքից:

Յուզւած ու գունատ՝ Մաքուլը վեր կա-
ցաւ տեղից ու կանգնեց պատուհանի մօտ։
Մացող գնացքից նրան թւում էր, որ դաշ-
տերն ու ցանքսերը ջրաղացի մի հսկայա-
կան քար լինեն, որոնք պտտւում ու անց-
նում են նրա առաջով։ Մի բոպէ նա փա-
կեց աչքերը, և նրա յիշողութեան մէջ պը-
տըտւեցին ու անցան, ինչպէս կալէյդոսկո-
պում, անցած սեմեստրի բոլոր օրերը։ Նա
յիշեց կատակներով ու ծիծաղով լիքը ա-
մառայ սկիզբը, մտաքերեց այն կիրակին,
երբ, սարալանջին նստած, ծաղիկներ էին հա-
ւաքում ու անտառի մէջ երգում, վազվում։
յիշեց նաւարկութիւններն ու այն գիշերը,
երբ մթութեան մէջ հնչեց այն յուզիչ ու
սիրատենչ հեկեկանքը, մտաքերեց անցած
օրերի այդ ամբողջ շղթան, նրա վերջին օ-
դաղը ու... ընկերոջ զոյգ արցունքները։

Գերմանիա, 1909.

ԿԱԽԱՂԱՆԻ ՎՐԱՅ

Նէր Ալ. Ծատուրեանին՝

Օրը մթնում էր։
Եկեղեցու գմբէթից զանգերի զոյգ թըր-
թիռները հաւատացող մարդկանց աղօթքի
կանչեցին։

Դալլաք-Մաթոսը խաչակնքեց երեսը և Աս-
տուծուն փառք տւեց։ Այդ օրը նրա առե-
սուրը յաջող էր անցել։ Տասն և ութ գլուխ
ու վեց միրուք էր խուզել. երեք ատամ հա-
նել, երկու մարդ նշտարել։

Ինքնաբաւականութեան մի ժպիտ անցաւ
նրա դէմքով։

Զեռը տարաւ արխալուղի երկայն գրպա-
նը, մատներով խառնեց ու զնզգնզացընեց սև
փողերն ու, մի հատ երեք կոպէկանոց հա-
նելով, կանչեց։

— Մանդրօ, ադա, քառ Ես, չես լսում,
Մանդրօ։

Կըսլակի կողքի մութ անկիւնից դուրս ե-
կաւ մի 10—12 տարեկան տղայ, վախկոտ
հայեցքն ուղղեց նրա աչքերին ու ինչ որ
բան մեղմ մրմնջաց:

Թիւղաքաղաքի այրի լւացարարի որդին
էր, որին Դալլաք-Մաթոսը պահում էր՝ որ-
պէս «դուքնի աշկերտ»:

— Եդ ի՞նչ ա, մրափել էի՞ր, հը՝, առ էս
երեք կոպէկը, վազ տու բախկալ Խաչանի
մօտ, մի մոմ առ բեր. գլխի ընկամր:

— Հրամանք ես, ուստա:

— Տես, գնալդ ու գալդ մի լինի, կիր-
կամուտ ա, ժամ պիտի գնամ. թէ որ եղա-
ցար՝ սաղ տեղդ ականջդ կպահեմ. հաս-
կացար:

— Հրամանք ես, ուստա:

— Դէ, կորի:

Սանդրօն, մնդիկի պէս դիւրաշարժ ու
կայտառ, դուրս թռաւ սափրատնից:

Մի ափի մէջ երեք կոպէկանոցը սեղմած,
միւսի մէջ, կարծես, ուստի հրամանը, նա վա-
գում էր՝ առանց աջ ու ձախ նայելու:

Շիլ-Թաւէիթենց փողոցում նրա առաջը
կտրեցին ընկերները՝ Պետօն, Մուկուչն ու
Արամը:

— Եդ սւր, Սանդրօն, —կանչեց մէկը:
— Արի, վէդ խաղանք, —ձայնեց միւսը:
— Ես նրանց երկուսի հախից եկել եմ,
թէ վէգեր ունես՝ եկ, քո հաշիւն էլ քաշեմ,
— պարծեցաւ երրորդը:

Սանդրօն բնազդով ձեռքը տարաւ վէգե-
րով լիքը գրպանը, բայց, յանկարծ, միւս ա-
փի մէջ զգալով երեք կոպէկանոցը, յիշեց
ուստի հրամանը և չգայթակղւեց:

— Զէ, չեմ կարող. ուստէս տեղ ա դըր-
կել, գիտես՝ ինչ կանի, —ասաց ու խոյս տւեց
ընկերներից:

Բախկալ Խաչանը մոմը կիսով չափ փա-
թաթեց թղթի մէջ ու տւեց Սանդրօյի
ձեռքը:

Սանդրօն դուրս եկաւ խանութից ու ա-
զատ շունչ քաշեց: Ուստի հրամանի կէսը
կատարել էր:

Այլ ևս չէր վազում:

Բարդիներով շղթայւած լայն փողոցի ծայ-
րին Սանդրօյի առաջբացւեց մայր մտնող ա-
րեգակը: Կիզիչ ու ասեղնոտ ճառագայթներից
մերկացած՝ նա, կարմիր ու մեծ, լողում էր
բլրակի գագաթին ու այստեղից իր վերջին
հրաժեշտը տալիս բնութեան: Երկինքը, ամ-

պերը, տների պատերն ու բարձր ծառերը,
կարծես, արիւնով ներկւած լինէին:

Սանդրօն մի բոպէ անշարժացաւ տեղում՝
կաշկանդւած բնութեան սքանչելի տեսա-
րանից, ու մըմնջաց.

— Այս, ինչու արել արեան գոյն ունի,
ինչու նա մայր է մանում...

Մի անբացատրելի թախիծ պատեց նրա
սիրտը:

Յանկարծ՝ նրա ականջին հասաւ թոշունի
մի աղեկտուր, սրտապատառ ճիչ։ Սանդրօն
յետ նայեց ու տեսաւ մի փոքրիկ թոչնիկ՝
իր ընկեր Պետօյի ձեռքում։

— Ո՞րտեղ գտար, Պետօ, — կանչեց Սանդ-
րօն՝ մօտ վազելով։

— Բոնեցի, Սանդրօ, բռնեցի։

— Վայ, բլբուլ է, Պետօ, բլբուլ. ի՞նչ սի-
րուն են բլբուները, — հիացած բացականչեց
Սանդրօն։

— Թող, կաց. սա մայր էլ ունի։

— Մայր էլ ունի, — կրկնեց Սանդրօն
մեղմ ու գորովալի։

Միւս ընկերներն էլ եկան ու շրջապա-
տեցին Պետօյին։

Մէկը թել բերաւ, որ ոտիցը կապի, միւ-

սը՝ թութ, որ կերակրի, երբորդը՝ վանդակի
մասին էր խօսում։

Ու այդպէս երկար զբաղւեցին թոչնի-
կով։

— Սա ի՞նչ մոմ է, — յանկարծ կանչեց
Մուկուչը՝ վերցնելով գետնին ընկած մոմը։

Սանդրօյի դէմքով մի տագնապ անցաւ։
Նա գունատեց ու, ցնցւելով, խլեց մոմը։

Ու անտեղելով մոմը, գոչեց լացի ու սար-
սափի շեշտերով։

— Էս ո՞վ կոտրեց, վայ ի՞նձ, ուստէս ի՞նձ
կսպանի...

Եւ, մոռացած բլբուլն ու ընկերները, ա-
ռաջ վազեց մոմը ձեռքին։

— Կոտրած տեղից բռնած կոտամ, որ
ուստէն չտեսնի, — մտածում էր նաև ճանա-
պարհին վազելիս։

Բայց ուստէն նկատեց կոտրած տեղը ու,
որպէս կարկտի ամպ, որոտաց խեղճ Սանդ-
րօյի գլխին։

— Տօ, հարամզադա, քեզ չասացին, թէ
շուտ գաս. հալա եղանալդ հերիք չէ, մոմն
էլ էսպէս կոտրած ես բերում, տօ, փուչ ա-
րարած...

Եւ երկաթի հաստ մատներով բռնեց Սանդ-

ըօյի ականջից ու դէպի սափրատան բակը
քարշեց:

Սանդրօյին թւաց, թէ ականջի կէսը պոկ-
ւեց, բայց համբերեց, ինչպէս միշտ: Այդպիսի
դէպում նա լեզուն պինդ կծում էր, որ լացը
չգար, ու յաճախ միայն խորը յոդոց հանում:

Դալլաք-Մաթոսին այդ համբերատարու-
թիւնը աւելի էր կատաղեցնում:

— Անպիտան, փուշ լակոտ, կտեմնես,
թէ քեզ ինչ կանեմ. էն ժամանակ կիմա-
նաս, թէ ով է Դալլաք-Մաթոսը:

Բայց Սանդրօն դեռ չգիտէր, թէ ինչ պի-
տի անէր իր ուստէն: Չէր հասկանում նը-
մանապէս, թէ էլ ուր էր սափրատան բակը
տանում, երբ կրպակի մէջ կարող էր ծե-
ծել ու պատժել, որքան քէֆին տայ:

— Ես քեզ պիտի կախեմ,—որոտաց Դալ-
լաք-Մաթոսը՝ փայտերի վրայից մի պարան
վերցնելով:

Սանդրօն մահւան բնազդով մի ճիչ ար-
ձակեց, սարսափի ու ահաբեկման մի սրտա-
ռուչ ճիչ, ու փարւեց Դալլաք-Մաթոսի դուրս
ցցւած փորին:

— Ուստա ջան, հոգուդ մեռնեմ... մայ-
րըս կիմանայ, լաց կլինի, կմեռնի...

— Զէ, ես քեզ դաս պիտի տամ, որ ի-
մանաս՝ ինչ ասել է ուստի հրամանը,—գո-
ռաց վարպետն ու, բռնելով ոտներից, կապ-
կըպեց պարանով:

— Ուստա ջան, ախր արևն էր... բլբու-
լը, բլբուլը...

Դալլաք-Մաթոսը այլ ևս չէր լսում: Սառ-
նասիրա ու լուռ՝ նա վերջացրեց իր գործն
ու, բռնելով կապկած ոտներից, վեր բար-
ձրացրեց Սանդրօյին գլխավայր ու, իբրև
մորթած այծիկի դիակ, կախ տւեց թթենու
կոտրած ճիւղից:

Նա տեսաւ, թէ ինչպէս ծառերի բները,
ջրի տակառը, ուստի ոտները, մի խօսքով՝
ողջ բակը շրջւեց ու պտոյտ եկաւ իր աշ-
քերում:

Նա մի քանի անգամ էլ ճշած աղերսի ու
վախի կոծով, բայց շուտով արտասունքները
խեղդեցին նրա բուկը, և նա լոեց:

Մի փոքր յետոյ նրա աչքերը կարմրեցին,
պղտորւեցին, և քթից ու բերանից սկսեց ա-
րիւն հոսել:

Դալլաք-Մաթոսը արդէն հեռացել էր: Սա-
փրատան դուռը դրսից կողպելով՝ նա մի
անգամ էլ խաչակնքեց երեսն ու փառք տը-

ւեց Աստծուն, որ ուրիշների պէս գող և
աւազակ չէ և շատերի պէս էլ քաղցած:
Նա գնաց ժամ՝ աղօթելու:

Որքան մնաց Սանդրօն կախաղանի վրայ՝
յայտնի չէ:

Միայն՝ երբ Դալլաք-Մաթոսը եկեղեցուց
տուն դարձաւ, նա ծառի վրայ չէր:

Բարի հարևանները նրան մահից ազատել
էին...

Մոսկվա, 1910.

ԱՌԱՋԻՆ ՎԻՃՏ

Փոքրիկ Սուրէնը վաղ առաւօտեանից մեծ
բան ու գործի էր:

Նրա համար գնել էին նոր մահճակալ:
Եւ նա, որ մինչև այժմ քնում էր հայ-
րիկի և մայրիկի ննջարանում, այսուհետեւ
պիտի քնէր տատիկի սենեակում, տատիկի
հետ:

Հէնց որ նոր մահճակալը սարքեցին՝ Սու-
րէնը սկսեց իր գաղթը: Խնչել ասես՝ նա
չհանեց իր հին մահճակալի տակից: Կոտ-
րած սայլակը, անզսպան շոգեկառքը, ան-
պոչ ձին, այն արկղը, որ ձիու համար ախո-
ռի տեղ է ծառայում, հոյն ու պտուտակը
և այլն և այլն: Այդ ամենը նա մէկ-մէկ
տեղափոխեց իր նոր օթեանն ու սարքեց
նոր մահճակալի տակ: Այնուհետեւ տարաւ
հայրիկի նւիրած թուրն ու հրացանն ու կա-
խեց ուղիղ գլխավերելը, որ, եթէ, բան է,

գիշերը գողեր մտնելու լինեն մահճակալի
տակից ձին գողանալու՝ խսկոյն վերցնի, խփի
նրանց և սպանի:

Սուրէնը անչափ գոհ էր իր նոր սեփա-
կանութիւնից:

Նախ որ՝ նոր մահճակալն առանց ցանկա-
պատի էր, և իր քէֆն ուզած ժամանակ կա-
րող էր ենել ու իջնել, ինչպէս իրենից մե-
ծերը. երկրորդ, որ ամենազլխաւորն էր,
նա, տատիկի սենեակում քնելիս, կարող էր
իր ծոցը դնել փոքրիկ, չալիկ Փիսօյին: Տա-
տիկը պառաւ է չի նկատի: տատիկը բարի
է ու ներողամիտ՝ նա մայրիկի պէս չի վեր-
ցնի ու կատւին պատշգամբից ցած չի ձգի:

Եւ այօր, էգուց, միւս էգուց, յետոյ է-
լի միւս էգուց և ուրիշ շատ էգուցներ Սու-
րէնը պիտի քնէր տատիկի հետ միասին,
միենոյն ննջարանում, նոր մահճակալի վրայ:

Այդ օրը Սուրէնը անհամբեր մթնելուն
էր սպասում: Նրան շատ էր հետաքրքրում,
թէ նոր մահճակալի վրայ ինչպէս պիտի
պառկէ, շորերը ուր պիտի դնի և ինչպէս
պիտի քնի:

Վերջապէս՝ հասաւ երեկոյեան ժամը ու-
թը: Մայրիկը նրան կերակրեց ու, ձեռքից

բռնելով, առաջնորդեց դէպի նոր օթևանը:
Շորերը հանելով՝ նա նրան պառկեցրեց ան-
կողնում, երեսիցը համբուրեց և, բարի գի-
շեր մաղթելով, հեռացաւ:

Սակայն՝ մի փոքր անց, կրկին ներս մտաւ,
տնտղեց սենեակն ու, սպառնալով Սուրէնին,
ասաց.

— Տես, Սուրիկ, եթէ կատւին դըել ես
անկողինդ՝ էլ ես քո մայրը չեմ և հայրի-
կին էլ կասեմ, որ դու շատ և շատ վատ
տղայ ես:

Բայց Սուրէնն այդ օրն ամենից քիչ կատ-
ւի մասին էր մտածում: Աւելի շուտ հետա-
քըրքը էր նրան ու գրգռել նրա երևակա-
յութիւնը նոր շրջապատը:

Նա փոքրիկ, սևահեր գլուխը սպիտակ
բարձի վրայ մերթ աջ, մերթ ձախ դարձնե-
լով, աչքերը պլղած, դիտում էր սենեակի
ըոլոր իրերը և այն մեծ ու փոքր ստւեր-
ները, որոնց՝ սեղանի վրայ դրած փոքրիկ
ճրագը ձգում էր ամեն մի առարկայի կող-
քին: Եւ լուռ իրերի ու մութ ստւերների
մէջ մենակ մնացած Սուրէնին թւում էր,
թէ այս գիշեր իր աչքերին քուն չէր գա-
լու:

Մի ժամ անց, զգոյշ ու մեղմ, բացւեց
դուռը, և տնքալով ու ճոռալով ներս մտաւ
պառաւ տատը:

Սուրէնը խորամանկութեամբ փակեց աշ-
քերը:

Տատիկը ոտների ծայրով, յամրաքայլ մօ-
տեցաւ նրան, իր ցուրտ և բարակ շրթունք-
ները հպեց նրա այտերին ու հեռացաւ դէպ
իր մահճակալը:

Սուրէնը վերմակը զլուխը քաշեց և, տա-
կից մի անցք բանալով, հետաքրքիր ու կայ-
տառ աչքերը տատիկին յառեց:

Այդ տեղից նա պարզ տեսնում էր, թէ
ինչպէս տատիկը, մէջքը նրան դարձրած,
պատրաստում էր հանւելու: Ահա նա ու-
զում է շրջազգեստի չափրաստները բաց ա-
նել. սակայն՝ նրա գողդոջուն և կնճոռու մատ-
ները միանգամայն այլ տեղ են որմնում
նրանց, ու երկար ժամանակ չափրաստները
չեն բացւում:

Սուրէնը յիշեց մայրիկի դիւրաշարժու-
թիւնն ու մտքումը հեգնեց պառաւ, ան-
շնորհք տատին:

Վերջապէս՝ նրան յաջողւեց շորերը յետ
կոճկել ու կամաց-կամաց հանւել: Եւ, ամեն

մի շարժում անելիս, նա անվերջ կերպով
տնքում ու ճոռում էր:

Երբ նա իր շապիկն էր փոխում՝ Սուրէնի
աչքով ընկաւ նրա զոյգ թառամած ու գորշ
ստիճները, որոնք կախւած էին նրա չոր
կրծքից, ինչպէս երկու դատարկ տոպրակ-
ներ: Տարօրինակ և տղեղ թւացին Սուրէ-
նին տատիկի ստիճները...

— Եթէ Թումիկը, — մտածեց Սուրէնը, —
որ այժմ օրօրոցումն է, ծծելու լինի տա-
տիկի ծիծը՝ կաթ կգայ, թէ ոչ:

— Զէ, չի գայ, — պատասխանեց ինքն
իրեն Սուրէնը. — կաթ չի գայ, որովհետեւ
Թումիկը տատիկի երեխան չէ: Այն, հայ-
րիկն ասում է, որ նա էլ Թումիկի պէս տա-
տիկի կաթն է ծծել: Իսկ եթէ հայրիկը հի-
մա ծծի տատիկի ծիծը...

Մի ըովէ Սուրէնը պատկերացրեց հայ-
րիկին, այն մեծ, միըսուքաւոր հայրիկին,
Թումիկի պէս՝ օրօրոցում կապկապած, Թու-
միկի ոլէս լալկան, տատիկի կաթը ծծելիս:
Այդ մտապատկերը նրան շատ զւարճալի
թւաց, և նա բարձր-բարձր ծիծաղեց վեր-
մակի տակ:

Բայց իսկոյն ուշքը. վրան հաւաքեց ու,

բերանը բռնած, լոեց, որ տատիկը նրան
շլսի:

Տատիկը նրան լսել չէր կարող, որովհետև
ամբողջովին թաղւել էր վերմակի տակ: Նա
ողջ մարմնով դողդողում էր, անընդհատ տե-
ղը յարմարեցնում և աւելի ու աւելի կըծ-
կւում հաստ ծածկոցի տակ:

Սենեակը ցուրտ էր:

— Այս, մըսում է,—մտքումը վճռեց Սու-
րէնը.—մայրիկն էլ է յաճախ մըսում: Բայց
հէնց որ մայրիկը մըսում է, հայրիկը նրան
տաքացնում է: Իսկ տատիկը: Ինչու հայ-
րիկը մի-մի անգամ էլ տատիկի մօտ չի գա-
լիս տաքացնելու:

Մի փոքր անց՝ տատիկը գլուխը հանեց
վերմակի տակից ու հանգցրեց ճրադը: Մի
ակնթարթում բոլոր ստերները դուրս ցատ-
կեցին իրենց դարաններից ու կլանեցին
սենեակը: Մութ խաւարի մէջ Սուրէնը ահ
զգաց, փակեց աչքերն ու, մի քանի ըոսկէ
անց, անուշ քնեց...

Անցաւ մի ամիս, և Սուրէնը միանդամայն
ընտելացաւ իր նոր օթևանին:

Մի գիշեր նա վատ երազներ տեսաւ: Նրա
ականջին դիպան ինչ որ հնչիւններ, շշուկ-

ներ: Նա, վախեցած, աչքերը բաց արեց և,
որպէս շարունակութիւն իր երազի, տեսաւ
հայրիկին և մայրիկին՝ շրջապատած տա-
տիկին:

— Ի՞նչ է պատահել, մայրիկ, —հարցրեց
տագնապով Սուրէնը:

— Ոչինչ, բալիկս, ոչինչ, դու քնիր, —
աշխատեց նրան հանգստացնել մայրը:

Բայց Սուրէնի քունն այլևս չտարաւ, և
մայրը նրան տեղափոխեց իր սենեակը: Հե-
տեւալ օրը տեղափոխեց և նրա մահճակա-
լը: Այնուհետև Սուրէնը քնեց կրկին հայրի-
կի և մայրիկի ննջարանում:

Առաւօտը տատիկը սենեակից դուրս չե-
կաւ, իսկ Սուրէնին արգելեցին այլևս նրա
մօտ մտնել:

Այդ օրը մի անծանօթ քեռի, որի քթին
ակնոց կար և ձեռափայտի վրայ ոսկրից շի-
նած նապաստակի գլուխ, եկաւ տատիկի
մօտ, փակւեց նրա սենեակում ու նորից
գնաց:

Անուհետև ամեն օր այդ քեռին գալիս էր
տատիկի մօտ: Հայրիկն ու մայրիկը մտա-
զբաղ, բայց սիրալիր, ընդունում էին նրան:
Ամեն անգամ մայրիկը նրան հրաւիրում էր

սուրճ խմելու, և նա միշտ հրաժարւում էր,
իսկ հայրիկը փորձում էր պահել նրա վե-
րաբերուն, ու նա չէր համաձայնուում։ Մի
օր էլ՝ հայրիկն ու մայրիկը երկար փակւե-
ցին տատիկի սենեակում ու յետոյ դուրս
եկան արտասուքներն աչքերին։

Նրանք լաց էին լինում։

Հայրիկն էլ էր լաց լինում։

Սուրէնը, ինչ որ վատ բան նախազգալով,
թագնւել էր մայրիկի պահարանի յետև ու
լոել։

Այդ օրն ակնոցաւոր քեռին չեկաւ։ Նրա
տեղ եկան ուրիշ քեռիներ ու պատիկներ։
Յետոյ եկան հօրաքոյրը և ուրիշ շատ հօ-
րաքոյրեր ու մօրաքոյրեր։

Բոլորն էլ մտնում էին տատիկի սենեա-
կը, մի առժամանակ մնում այստեղ ու նո-
րից դուրս գալիս խոնաւ աչքերով։

Նրանք քայլում էին յամը ու հանդարտ
ու խօսում հազիւ լսելի, ցածր ձայնով։ Ողջ
տունը, կարծես, հառաջում ու փափառմ էր։

Համարեա ամբողջ օրը Սուրէնը մնաց մայ-
րիկի պահարանի յետևին, և ոչ ոք նրանով
չհետաքրքրւեց։

Հետեւ առաւօտ Սուրէնին մաքուր հագ-

ցրին ու տարան տատիկի սենեակը, որ ձեռ-
քը համբուրի։

Տատիկին, նոր շորեր հազցրած, պառկե-
ցրել էին սեղանի վրայ, մի երկայն ու նեղ
սնդուկի մէջ։

Երբ Սուրէնը նրա ձեռքը համբուրեց՝ նա
չիմացաւ։ Նրա աչքերը փակ էին։

Սուրէնն այժմ միայն հասկացաւ, թէ ին-
չու բոլորն էլ հանդարտ էին քայլում ու
շուկով խօսում։

Որովհետեւ տատիկը քնած էր։

Բայց նա սաստիկ ուզեց մի կերպ իմաց
տալ տատիկին իր ներկայութիւնը։ Դրա հա-
մար նա բռնեց տատիկի ձեռքը, որ թափա-
հարի, բայց նրան արգելեցին և անմիջապէս
սենեակից հեռացրին։

Ինչու տատիկի ձեռքը այնքան ցուրտ
էր...

Շուտով կրկին հաւաքւեցին երէկւայ պա-
պիկներն ու քեռիները, տատիկներն ու հօ-
րաքոյրերը։

Եկաւ և ժամի պապին, որ երկար միբուք
ունէր և միբուքիցն էլ երկար մի «տէր-ո-
ղորմեա», եկաւ և ժամի քեռին՝ քթախոտի
տուփը ձեռին։

Նրանք ժամի շորեր հազան ու սկսեցին
ժամ անել, ինչպէս եկեղեցում, խնկի կա-
պոյտ ծուխով լցըին ու մթնացըին փոքրիկ
սենեակը:

Բոլորը, տխուր և լուրջ դէմքերով, գլխա-
կոր, շրջապատել էին այս սեղանը, որի վրայ
տատիկն էր պառկած. իսկ սեղանի երկու
ծայրերին, տատիկի գլխավերեն ու ոտի տա-
կը, բարձր մոմկաների մէջ, դէպի վեր էին
լողում երկու հաստլիկ կերոնների սուր լեզ-
ւակները:

Մի փոքր յետոյ տատիկին վերցըին, դրին
ուսերի վրայ ու տարան:

Տատիկը իմացաւ, թէ ինչպէս իրեն բար-
ձրացըին ու տարան:

Նրա աչքերը էլի փակ էին...

Մի քանի ժամից յետոյ նրանք վերադար-
ձան տուն՝ հաց ուտելու, բայց այս անդամ
առանց տատիկի:

Նրան չէին բերել...

Դուրսը ցուրտ էր, և սաստիկ ձիւն էր
գալիս:

Երեկոյեան, երբ բոլորը ցըւեցին, տունը
խաղաղւեց:

Սուրէնին իր նոր մահճակալի հետ տե-

ղափոխեցին կըկին տատիկի սենեակը: Մի-
այս այս անդամ տատիկի փոխարէն նրա
հետ գիշերեց մեծ մօրաքոյրը:

Սուրէնը մտաքերեց իր առաջին տեղա-
փոխութիւնը և յիշեց տատիկին: Յիշեց տա-
տիկին, երբ, վերմակի տակ կուչ եկած, մըր-
սում ու գողգողում էր:

— Մարիամն ասաց, որ տատիկին տա-
րան և դրին հողի տակ,—մտածեց Սուրիկը.
—իսկ այս բուք-բորանին տատիկը այնտեղ
արդեօք չի մըսում... Խեղճ տատիկ, մըր-
սում ես, հա, դու դողդողում ես, հա...

Սուրէնը խղճահարւեց ու մղկտալով հե-
կեկաց...

Մոսկվա, 1911.

ՀԱՅ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ԿՈՏՈՐԾԸ

1

Աշնան արեի առաջին, գոյ ճառաղայթները գեղին ժապաւէնների խուրձով ներս սողացին պատուհանից ու մեղմ խաղացին մահճակալի մէջ պառկած փոքրիկ Աշոտի դէմքի վրայ։ Աշոտը մի քանի անգամ դարձդարձեց զլուկը սպիտակ բարձի դարիվերի վրայ, ապա, աչքերը բանալով, ճեղճեղեց թերթեռնքները, փոքրիկ բռունցքներով տրուեց կոպերն ու ոտքի կանգնեց։

Ննջարանում մարդ չկար։ Հայրիկի և ժայրիկի մահճականները դատարկ էին։

Հարեան սեղանասնից նրա ականջին դիպան գդալների ու բաժակների զընդոցներ։ Դուան կիսաբաց ճեղքից վչեց թէյի խոնաւ ու անուշ հոտը։

— Մայրիկի, —կանչեց Աշոտը բարձր և

անհամբեր շեշտով։ Դա նրա արթնանալու աղդանշանն էր։

Նրա ձայնից ներս մտաւ աղախինը, և Աշոտը սկսեց թէյի պատրաստուել։

Մինչ աղախինը նրան հագնում, լւանում ու յարդարում էր, Աշոտը իր մտքում օրւայ զբաղմունքի ծրագիրն էր կազմում։

Եղանակը լաւ էր։ Երէկւայ անձրեւ դադարել էր։ Նա կարող էր ողջ օրը անց կացնել պարտիզում։ Նա այնտեղ, մեծ թթենու տակը, մի խանութ էր բաց արել։ Ռետինէ կրկնակօշիկների մեծ արկղը երկու կիսի բաժանելով՝ նա հիմք էր զբեկ իր ունիվերսալ' առևտորին։ Այդաեղ կարելի էր գտնել ամեն ինչ՝ կոճակ, թուղթ, հին զբչածայրեր, չորացրած հուն, չթի ու կտակի կտորտանք, հայրիկի ծխախոտի դատարկ տուփերը, մայրիկի կոտրած մատնոցը, գեղատան մեծ ու փոքր շիշեր և այն և այն։ Մի խօսքով՝ աւելի բաղմաքովանդակ ու այլասեռ, քան հայրիկի խանութը։

Այսօր նա մտադիր էր այդ ամենը նորից աչքի անց կացնել, նորից կարգի բերել և, որ զլխաւորն է, խանութի ճակատին մի ցուցանակ կախել։ Զէ՞ որ բոլոր խանութները

յուցանակներ ունեն: Այլապէս ամեն մարդ կգայ և ուրիշի խանութին տիրապետութիւն կանի:

Դրա համար էլ նա որոշել էր վերցնել պատի հին օրացոյցի կարտոնէ տախտակը, որ քառակուսի ձև ունէր, ու յետեն էլ մաքուր էր, և կացնել մեխով խանութի ճակատին: Ցուցանակի նկարիչը կիխի մայրիկը, որին կինդղի հետևեալը գընել՝

«Ուրիշի խանութը չէ, ի՞նչ է»:

Նա այդ մտադրութեամբ սեղանատունը շտապեց, որպէսզի թէյ խմի և ապա գործին կպչի:

Երբ դուռը բացեց՝ նրա աչքին ընկաւ մի անծանօթ դէմք, որ, նստած սեղանի մօտ, թէյ էր խմում և ինչ որ բան պատմում: Հայրիկն ու մայրիկը նրան ուշադիր լսում էին: Հէնց որ Աշոտը ներս մտաւ՝ նրանք մի ընդհանուր հայեացքով միմեանց նայեցին ու խօսակցութիւնը ընդհատեցին:

— Ա, բարի լոյս, Աշոտ աղա,— ասաց հայիկը ու ապա դարձաւ անծանօթին.

— Պարհն վահան; թոյլ տւեք ներկայացնեմ, մեր տան Աշոտ երկաթը, կամ, աւելի ճիշտն ասած, Աշոտ Զարը:

Անծանօթը նրա փոքրիկ թաթը սեղմնց իր լայն ու կոշտ ափի մէջ, հեզ ժպտաց ու շարունակեց լուռ նստել իր տեղը:

Մայրիկը Աշոտի համար թէյ ածեց ու դրեց առաջը: Իսկ Աշոտը, մոռացած և թէյը և իր ծրագիրները, յափշտակւած, աչքերը չէր հեռացնում անծանօթի դէմքից:

Նախ՝ նա նկատեց, որ վերջինս միւս ազգականների ու հիւրերի նման չէր, որոնք իրենց մածուցիկ փաղաքշանքներով ձանձրացնում էին իրեն: Նա նոյն իսկ ուշադրութիւն էլ չդարձրեց իր վրայ: Նոյն այդ անուշադրութեամբ էր վերաբերում և դէպի մայրիկը և երբ խօսում էր՝ հայեացքը միայն հայրիկին էր ուղղում:

Ապա, թէյից յետոյ, Աշոտը վեր կացաւ տեղից ու, պտտելով նորեկի չորս կողմը, տնտղեց նրան ոտքից մինչև գլուխ: Նա կուցացաւ ու դիտեց կարճ բաճկոնակի տակից կախւած ատրճանակը, ապա յետ նայեց և ուզեց մօտենալ սենեակի անկիւնում դրած ծանըը ու մեծ հրացանին:

— Հեռնել կաց, Աշոտ, ձեռք չտաս՝ կտրաքի, — սաստեց անմիջապէս հայրիկը:

Թէյից յետոյ հայրիկն ու նորեկ հիւրը

դուրս եկան բակը ու բարձրացան դարպա-
սի կողքին գտնւող փայտանոցի կտուրը: Ա-
շոտը գաղտագողի հետևեց նրանց: Այդտեղ
նորեկ հիւրը բացատրեց և ցոյց տւեց, թէ
ի՞նչպէս հայրիկը կարող է անխաս կերպով,
թագնւած դէպի փողոցը բարձրացող պատ-
նէշի յետևին, անվերջ կրակել հրացանից:
Այդտեղից նրանք իջան մառանը: Հայրիկը
հանեց իր ատրճանակը և պահարանի մէջ
թագցրած իր հրացանն ու ցոյց տւեց նո-
րեկին: Վերջինս տնտղեց զէնքերը, փորձեց
փամփուշաներն ու գովասանքով հայրիկին
վերադարձրեց:

Աշոտն ուշադիր հետևում էր նրանց գոր-
ծողութիւններին ու մի քայլ նրանցից չէր
հեռանում:

Ճաշի ժամանակ հիւրն ու հայրիկը, մի
քանի բաժակ գինուց յետոյ, Աշոտի ներկա-
յութեամբ սկսեցին աւելի ազատ խօսել:

— Այդ անիրաւներին միայն զէնքը կա-
րող է խելքի բերել, —կրկնում էր տաքացած
նորեկ հիւրը:

Մի փոքր անց Աշոտը իմացաւ, որ այդ
խօսքերը վերաբերում են թուրքերին, և որ
առհասարակ բոլոր նախապատրաստութիւն-

ները տեսնուում են նրանց դէմ կուեկու հա-
մար:

Ճաշից յետոյ հիւրը մնաց տանը, սենեա-
կում փակւած, և փողոց դուրս չեկաւ:

Ընթրիքի ժամանակ Աշոտի ներկայութիւ-
նը ամենեին մոռացան: Հիւրը պատմեց մէկը
միւսից սոսկալի պատմութիւններ թուրքերի
մասին: Նա ասաց, թէ ի՞նչքան վատ են թուր-
քերը, ի՞նչքան արիւնաբեռու, որ նրանք ամեն
ըովէ կարող են յարձակւել իրենց տան վրայ,
թալանել, այրել, բոլորին կոտորել, որ ան-
հրաժեշտ է միշտ զինւած, պատրաստ լինել
և նրանց եկած ժամանակը՝ հրացաններից
զարկել և անխնայ կոտորել:

Սակայն՝ մայրիկը արգելեց Աշոտին մինչև
վերջը լսել: Նա նրան ուղարկեց իր ննջա-
րանը քնելու:

Բայց Աշոտի քունը արդէն փախել էր:

Ննջարանից նա ազահութեամբ շարունա-
կում էր ականջ դնել հիւրի պատմութեանը,
որի հետ զուղընթացաբար գործում էր նրա
զրգուած մանկական երևակայութիւնը:

Յանկարծ, որտեղից որ էր, յիշեց Ղասու-
մին, այն անառներեք տարեկան թուրք տղա-
յին, որ իրենց տան համար աղբիւրից կը-

Ժերով ջուր էր կրում։ Սրանից երկու ամիս առաջ նա հեռացաւ հայկական թաղից՝ Աշոտին հետևեալ սպառնալիքը կարդալով։

— Սպասիր, բոլոր հայերիդ ոչխարների պէս պիտի մորթոտենք։

Աշոտն այն ժամանակ ուշադրութիւն չը դարձրեց այդ սպառնալիքի վրայ, կամ, աւելի ճիշտն ասած, չըմքոնեց նրա միտքը։

Այսօր, անծանօթ հիւրի այցելութիւնից և պատմութիւններից յետոյ միայն սկսեց գուշակել այդ խօսքերի իսկական իմաստը։

— Ինչքան վատ տղայ է Ղասումը, — մտածեց Աշոտը, — նա գող էլ է. քանի անգամ նա գողացել է իմ ճաները. մինչեւ անգամ նա մեր հաւաքնից ձու էլ է թոցրել. իսկ հայրիկն ասում է. — ով գող է, նա փուչ, փողոցային տղայ է։

Այնուհետև քունը Աշոտին կամաց-կամաց յաղթահարեց ու նետեց երազների գիրկը։ Մէկը միւսից վատ, մէկը միւսից սարսափելի էին նրա երազները։ Նա երազին տեսաւ, որ փոքրիկ Ղասումի առաջնորդութեամբ մէծ, մորթէ գլխարկներով թուրքեր լցւել են իրենց ննջարանը։ Ոմանք հրացան-

ներով էին, ոմանք մերկացրած սրերով։ Նրանք թոկերով կապկապեցին հայրիկի ձեռներն ու ոտները, պարտէզ տարան, այստեղ գետին գլորեցին ու, ինչպէս ոչխարի, վիզը կտրեցին... Երէկւայ հիւրը, փամփուշտներով գոտեպատւած, թագնւել էր փայտանոցի կտրի կարճլիկ պատի յետեին ու անդադար հրացաններ էր պարպում դէպի փողոցը։ Մայրիկը, որտեղից որ էր, ճշում ու լաց էր լինում... Իսկ պատի տակ, այնտեղ, ուր ճուտ էին մորթում, ընկած էր հայրիկի գլուխը, բեխերն ու միրուքը արեան և ցեխի մէջ շաղախւած....

Աշոտը քնի մէջ սարսափից ճշաց, աչքերը բաց անելով՝ ցած թռաւ անկողնուց ու դէպի պատուհանը վազեց։

Նա տեսաւ, որ այդ ամենը երազ էր։

Օրն արդէն լուսացել էր։ Դէմ ու դէմ սարի յետեկց ծագում էր աշնան գեղանի արեր։ Նրա գեղին ճառագայթները գգւանքով փարեցին Աշոտի կիսամերկ մարմինն ու ոսկի գոյնով ներկեցին նրա ձիւնափայլ ականջներն ու փոքրիկ գլխի մետաքսէ գանգուրները։

Աշնանային զով, մեղմանոյշ առաւոտ էր։

Այդ օրը, երբ սեղանատուն դուրս եկաւ, Աշոտն այլ ևս երէկւայ հիւրին այնտեղ չգտաւ:
Դեռ լոյսը չբացւած՝ նա անհետացել էր:

II

Աշոտն այժմ տարւած է նոր հովերով:
Նրան այլ ևս չեն հետաքրքրում նախկին զբաղմունքները: Նրա խանութը մնացել է երեսի վրայ, առանց ծրագրած ցուցանակին անգամ արժանանալու: Մի շաբաթից աւել է նոյնիսկ թթի ծառի տակը չէ անցել: Նըրան այժմ ծիծաղելի և ամօթաբեր է թւում, թէ ինչպէս նա կարող է հայրիկի պէս ժամերով նստել խանութի առաջ, միջի իրեղինները անվերջ քանդել ու սարքել, խաղաղ վաճառականութեամբ պարապել, երբ արդէն կեանքի ու մահւան խնդիր է դրւած:

Հարկաւոր էր, հարկաւոր էր բոլոր միջոցները ձեռք առնել, որպէսզի այն անպիտան թուրքերն ու Ղասումը չհամարձակւեն դարպասի շէմքը կոխել:

— Ղասումը թուրք է, վաս է, երբ նա գայ՝ հարկաւոր է նրան խփել և սպանել, — այդպէս էր որոշել այն օրւայ հիւրի այցելսւթիւնից յետոյ Աշոտը:

Բայց դրա համար անհրաժեշտ էր այն օրւայ հիւրի պէս բաճկոնակի տակ ատրճանակ ունենալ և ուսին՝ հրացան: Հարկաւոր էր նրա պէս սպառնազինւել և, որ գլխաւորըն է, նրա պէս անուշադիր վարւել մայրիկի և աղախնի հետ ու աւելի շատ հայրիկի հետ խօսել:

Նա քրքրեց իր խաղալիքների արկղն ու գտաւ իր հին ատրճանակը. մայրիկի մօտ կար մի տուփ թղթէ փամփուշտներ: Այնուհետև մտաբերեց, որ հրացան էլ ունի, Զատկին հայրիկից նւէր ստացած, այդ էլ գտաւ նախասենեակի պահարանում: Ի՞նչ արած, որ արձակած ժամանակը տաք արճճի սեղ թոկով կապած խցան է թոչում: Որպէսզի այդ խցանային գնդակն աւելի հեռու գնայ և ուղղակի թշնամու սրտին կաչի՝ նա կտրեց թոկն ու դէն շպրտեց:

Նա ուազմական բոլոր նախապատրաստութիւնները տեսել էր:

Այժմ անհրաժեշտ էր «դիրք» գրաւել:
Այդպէս էր ասում հիւրը:
Փայտանոցի կարին, նախ, հայրիկն է. երկրորդ՝ միշտ էլ մատչելի չէ նրան. սանդուխը ընկած ժամանակ՝ չի կարող դնել՝ ծանր է:

Ամենայարմար տեղը նա գտաւ պատշգամբի գլուխը, որ ուղղակի դարպասին էր նայում։ Այդտեղից նա ամենայաջող կերպով կարող էր դիմագրել թշնամուն։

Սակայն՝ որպէսզի թշնամին չտեսնի նըրան, և թուրքերի գնդակները նըրան չդիպչեն՝ պատսպարտելու համար նա պատշգամբի ճաղերից կախեց մայրիկի գոգնոցը։ Գոգնոցի վրայ գտնւած ծակոտիներն էլ կարող էին դիտարանի տեղ ծառայել, որտեղից նա կարող էր հետեւ թշնամու գործողութիւններին։

Եւ այսպէս՝ Աշոտը կազմ ու պատրաստ էր. այժմ այլ ևս թուրքերից և մանաւանդ Ղասումից վախ չունէր։

Ամեն առաւօտ, թէյից յետոյ, Աշոտը առըրճանակը կախում էր գոտուց, թղթէ փամփուշտների տուփը դնում գրպանը, հրացանը կախում ուսից և «դիրքը» դուրս գալիս։ Այդ միջոցներին նա միշտ մայրիկի հարցերն ու աղախինի համաքները անսպատախան էր թողնում։ Նա դէմքին տալիս էր խոժոռ արտայայտութիւն՝ ճակատին հաւաքում էր մի զոյգ արհեստական, փխրուն կնձիռներ, փոքրիկ թշերն ուսցնում էր, աղ-

ւամագ ունքերը կիտում և գոգնոցի յետևին, պատսպարտած, անց ու դարձ անում և սըրտատրովի թշնամուն սպասում։ Իսկ երբ յոգնում էր՝ չքում էր գոգնոցի առաջ ու նրա ծակոտիներից դէպի փողոցի դուռը նայում։

— Մի թող գան...—խորիմաստ սպառնալիքով կրկնում էր Աշոտը։

Թշնամին, սակայն, չէր գալիս։

Օրերն անցնում էին, իսկ Աշոտի տենչած կոփւը չէր սկսում։ Մինչդեռ՝ աշունը մօտենում էր իր վախճանին, և ցուրտ ձմեռը սպիտակ գգեստով զարդարում էր ծառերի ճիւղերը, տների կտուրներն ու հեռաւոր, բարձր սարերը։

Աշոտին այլ ևս արգելում են պատշգամբ ելնել։ Նրա «դիրքը» քամին ճիւնով է ծածկել, իսկ պատնէշը՝ գոգնոցը գիշերւայ սառնամանիքներից սառել, չոր կաշի է կըտրել։

Այդպէս անցաւ ողջ ձմեռը, և կոփւը չըսկըսեց։

Փետրւար ամիսն էր։

Մի օր Աշոտի ականջին դիպաւ դռան շախչախի արտասովոր ու կոպիտ զարկը։

Աշոտը դուրս վազեց և պատշգամբից տեսաւ... ինչ, նրան, թշնամուն՝ մի մեծ փափախաւոր թուրքի, որի ողջ հասակը լուսանկարչական պատկերի պէս երեսում էր դարպասի դռնակի շրջանակի մէջ։ Ուրեմն՝ նրանք են, թուրքերը։ Ուրեմն՝ հայ-թուրքական կոտորածը սկսւել է։

Աշոտը շտապի, մի քանի ակնթարթում սպառազինւեց և, վազէ-վազ պատշգամբի գլուխն անցնելով, դոգնոցի յետևին չոքած, դարան մտաւ։

Թուրքը, անփոյթ ու անվախ, շարունակում էր կանգնած մուալ՝ իր աչքերը վերև, պատշգամբին յառած։ Երկի՝ մի վատ բան էր մտածում։

Բայց Աշոտը որոշել էր ոչ ոքի չխնայել։ Նա դոգնոցի ծակոտիներից հրացանի խոռովակը թուրքին ուղղեց և, ճիշտ նրա կըրծքին նշան բռնելով, իջեցրեց չախմախը։ Խողովակի ծայրից խցանի թեթև գնդակը դուրս թռաւ և ընկաւ դարպասի առաջ, թուրքի ոտների մօտ, բայց թուրքին չդիպաւ։ Աշոտը վրիպեց։ Նա յուսահատ, բայց անվեհեր, ոտքի կանգնեց և, գոտուց ատրճանակը հանելով, թուրքի ուղղութեամբ արձակեց։

Իսկ անիրաւ թուրքը, որ Աշոտի բոլոր գործողութիւններին հետեւում էր, փոխանակ դիմադրելու, հայրական մի բարի, գորովալի ժայիտ արձակեց և, բակը մտնելով, բարձրացրեց խցանն ու Աշոտին ուղղեց։

Աշոտը տարակուսանքից անշարժացաւ։

Ինչու թուրքը չի կրակում, ինչու նա չի յարձակում, թալանում, հրդեհում։ Անկասկած՝ նա խորամանկութիւն է անում, նենդաբար խարդախել է ուզում...

Եւ մինչդեռ Աշոտը խարխափում էր տարակուսանքների ու կասկածների ցանցերում՝ յանկարծ դարպասի փոքրիկ դռնակի մէջ տեսարանը փոխւեց, և Աշոտի հայ-թուրքական կոտորածը միանգամայն այլ ընթացք ստացաւ։

Այնտեղ, թուրքի բակը ներս մտնելուց յետոյ, երևացին մի քանի, փայտերով բարձւած էշերի գլուխներ...

— Էշեր, էշեր,—բերկրանքով բացականչեց Աշոտը և, հրացան ու ատրճանակը մի կողմ նետելով, մոռացած ներքեւ կանգնած թուրքի ներկայութիւնը, զինաթափ դէպի բակը վազեց։

Մինչ այդ՝ աղախինը բաց արեց դարպա-

սի լայն փեղկերը, ու փայտերի տակ տընքացող անսառները բակը մտան:

— Բարե՛, Ալլահ սախլասն, Հասան-Դաշի, քանի՞ ժամանակ է՝ չես երեսում, — ասաց աղախինը թուրքին՝ ծանօթ ժպիտով և մի տեսակ գաղտնի յանդիմանութեամբ:

Թուրքը մտերմաբար գլուխը շարժեց և, երկնքին նայելով, ուսերը խորհրդաւոր վեր քաշեց ու մի ինչ որ բան մեղմ մըրմիջաց:

Իսկ Աշոտը, մոռացած նախկին ուազմական տրամադրութիւնը, անհամբեր պտտում էր կենդանիների չորս կողմը, ուրախութիւնից ցատկուում և մերթ էշերի պարանոցին փաթաթւում, մերթ նըանց տաք դունչը փաղաքշում:

Թուրքը հասկացաւ Աշոտի ցանկութիւնը, ժպտաց նոյն հայրական գորովով և, Աշոտին գրկելով, էշերից մէկին նստացրեց:

Աշոտը, ժպտերես ու ինքնագոհ, թափահարում էր ոտներն ու բացականչում.

— Չու, հօ չու, չու...

Եւ մինչդեռ Հասան-Դային սարքում էր փայտերը՝ Աշոտը մէ քանի անգամ էշի վրայ պտտեց բակի մէջ:

— Ինչու հայրիկն էլ էշեր չի առնում, — մտածեց Աշոտը, — ես որ մեծանամ՝ անպատճառ պիտի Հասան-Դայու պէս էշեր պահեմ:

Եւ երբ Հասան-Դային Աշոտին իջեցրեց էշից ու, կենդանիներին առաջն առած, դուրս եկաւ բակից՝ Աշոտը քիչ մնաց ակսոսանքից լայ:

Ապա դուրս եկաւ դարպասի առաջ և ճանապարհ գրեց թուրքին, որ, երկայն ճիպոտը մերթ մի էշին, մերթ միւսին զարկելով, անհետացաւ փողոցի ծայրին:

— Ինչ լաւ մարդ է Հասան-Դային, — մտածեց երախտագիտութեամբ Աշոտը, — նա ինձ էշի վրայ նստացրեց:

Եւ մի փոքր յետոյ կրծքից բղխող հառաչի հետ ասաց մտքումը.

— Ախ, երանի Հասան-Դայուն, որ էշեր ունի:

Մոսկա, 1911.



JK

ԱՀ 1
ՏՄ 1



44209